№ 267 ՇԱԲԱԹ 30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1913 ՇԱԲԱԹ 30 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 267

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊՈՍԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կօպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ **1914** Թ. ՀԱՄԱՐ

43-ՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ռուբ.	4 ռուբ.	3 ռուբ.	2 ռուբ.

Դեկտեմբերի 1-ից մինչև յունվարի 1-ը 85 կօպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Ցայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Ցայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կ.։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1914 թ. համար (սկսած յունվարի 1-ից 1914 թ.) ՄԻԱՆՈՒԱԳ կամ ՄԱՍ-ՄԱՍ վճարած կունենան 10 ռուբլի բաժանորդավճարը, կը ստանան ԶՐԻՒԲԱՐ հետեւեալ գրքերից ՄԷԿՆ ՈՒ ՄԷԿԸ.

1) Գր. Արծրունու աշխատութիւնները 1865—1871 թ.

Այդ գրքի մէջ զետեղված են Գր. Արծրունու այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Գիրքը բաղկացած է 408 էջից։

2) Վրթանէս (Ա. Քալանթարի) Մանրանկարները, I և II հատոր։

«Մանրանկարները» ամփոփում են իրանց մէջ հայկական հասարակական կեանքի և նրա արտայայտութիւնների նկարագրութիւններ։ Գիրքը բաղկացած է 520+472 էջից։

Մինչև ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ը բաժանորդագրվածները կը ստանան ԵՐԿՐՈՐԴ գիրքը, իսկ նրանից յետոյ բաժանորդագրվողները—ԱՌԱՋԻՆ գիրքը։

Արտասահմանեան բաժանորդները պէտք է ուղարկեն գրքերի ճանապարհածախքը, որի քանակը կը յայտարարվի իր ժամանակին։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". *Արտասահմանից՝* TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

«ՄՇԱԿԻ» խմբագրութիւնը յայտնում է, որ վաղը, կիրակի, դեկտեմբերի 1-ին

ԱԼԷՔՍԱՆԴՐ
ՔԱԼԱՆԹԱՐԻ

մահվան քառասնօրեակին Խօջիվանքի գերեզմանատան եկեղեցում կը մատուցվի պատարագ, որից յետոյ հանգուցեալի գերեզմանի վրա կը կատարվի ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ։

Պատարագի սկիզբը առաւօտեան ժամը 10½-ին, իսկ հոգեհանգստինը՝ ժամը 12-ին։ 2—1

Սօֆիա Գրիգորեան Քալանթար իր զաւակներով յայտնում են, որ վաղը կիրակի, դեկտեմբերի 1-ին, հանգուցեալ ամուսնու և հօր՝

ԱԼԷՔՍԱՆԴՐ
ՔԱԼԱՆԹԱՐԻ

մահվան քառասնօրեակին Խօջիվանքի գերեզմանատան եկեղեցում կը մատուցվի պատարագ, որից յետոյ հանգուցեալի գերեզմանի վրա կը կատարվի հոգեհանգիստ։ Պատարագի սկիզբը առաւօտեան ժամը 10½-ին, իսկ հոգեհանգստինը՝ ժամը 12-ին։ 2—1

ՎԱՐՎԱՌԻ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԽՕՋԱՓԱՐՈՒԽԵԱՆ և իր զաւակները յայտնում են ազգականներին և ծանօթներին, որ վաղը, կիրակի, դեկտեմբերի 1-ին,

Աղեքսանդր Գրիգորեան
ԽՕՋԱՓԱՐՈՒԽԵԱՆԻ

մահվան քառասնօրեակին Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցում կը մատուցվի պատարագ և տեղի կունենայ հոգեհանգիստ։ Պատարագի սկիզբը առաւօտեան ժամը 10½-ին, իսկ հոգեհանգստինը՝ ժամը 12-ին։

1109. 1—1

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Երկուշաբթի, դեկտեմբերի 2-ին

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

կը ներկայացնէ—Մոլիէրի

ԴՕՆ-ԺՈՒԱՆ

Կոմէդիա 5 գործ. թարգմ. Գ. Իփէկեանի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Ադամեան, Արուսեակ, Դուլգարեան, պ. պ. Ալահվերդեան, Բերոյեան, Թաշճեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Մուրատեան, Տէր-Առաքելեան, Փափազեան Վահրամ, Օվի-Անարոնեան, աշխատակից-աշխատակցուհիներ և ուրիշներ։

Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։

Բեժիսսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ

1105. 2—1

Առաջնակարգ ցիրկ
ԵՂԲ.
ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ

Այսօր, շաբաթ, նոյեմ. 30-ին կը կայանայ մեծ երեկոյթ «ՄԱՐ օտարաքներ» անունով։ Մասնակցում են ռուս և եւրօպացի առաջնակարգ արտիստներ։ Այսօր ցիրկային վերջին նոր յոյթներ, նոյնպէս և երկրորդ միջազգային չէմպիօնատի բացումը։ Ցիշեալ չէմպիօնատը կազմակերպված է «Вѣстникъ Спорта» թերթի իմագրութեան աշակցութեամբ։

Տեղի կունենայ մրցանակաբաշխութիւն։ Թիֆլիսի մրցանակն է՝ պատուոյ մի գաւաթ, որ նուիրել է տեղական սպորտսմէնների մի շքեղ. կան մրցանակներ դրամական, ոսկէ և արծաթէ մէդալներ և այլն։ Այսօր կը վարեն մարտնը—Ջէմս Քակսօնը՝ Սէդոյի հետ, Վախտուրօվը՝ Վիլդէմանի հետ, Ալ. Սօլովիէվը՝ Քանսօնադի հետ, Լավրէնօվը՝ Սէպնիկի հետ։

տա. 1104. 1—1

Թիւրքիի համպատարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Վերադառնալով արտասահմանից վերանորոգից ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱՖՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈԹՈՐԱԿՈՒՄՈՎ։ Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ՐԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ ցերեկ. և 5—7 ժ. երեկոյեան. ՀՐԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՀՐԻ։ Бебутовская 23. тел. 7—92.

(ա.օ.) տա. 977. 100—25

ԱՒԵԼԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ, ՔԱՆ ԱՐՔԱՆ

Ֆրանսիական առածը «աւելի արքայական, քան արքան» ամենալաւ կերպով ապացուցեց իր վերաբերմամբ ռուսաց Պետական Խորհուրդը, որ համաձայն է օտար երկիրների սենատին (այլ ֆունկցիա ունի ռուսական սենատը), իբրև պարլամենտի վերին ատեան։

Պետական Խորհուրդը աւելի ըէակցիոն գտնվեց, քան կառավարութիւնը, մերժելով Լեհաստանի քաղաքային դումաների մէջ լեհական լեզուի գործածութիւնը թոյլատրելու մասին կազմած ծրագրի այն կէտը, որով թոյլատրվում է այդ լեզուի գործածութիւնը դումաների նիստերի ժամանակ։

Կառավարութիւնը, ի դէմս մինիստրների խորհրդի, ընդունելի էր գտել Դումայի օրինագծի այդ կէտը, հիմնվելով այն առողջ դատողութեան վրա, որ օրինագիծը գլխաւոր նպատակ ունի քաղաքային մտահոգութեան բարձրացումը, բայց այդ բարձրացումը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ թոյլատրվի քաղաքային դումաներում լեհական լեզուի գործածութիւնը, որպէսզի ձայնաւորները, որոնց մեծամասնութիւնը ռուսերէնը չէ հասկանում, կարողանան արտայայտել իրանց կարծիքը։

Հասկանալի է, որ օրինագծի նպատակը ոչ թէ պետական լեզուն արտաքսելն է Լեհաստանի քաղաքային դումաներից, այլ միայն թոյլատրելը, որ ռուսերէն չիմացող իրաւասուները կարողանան իրանց կարծիքները արտայայտել լեհերէն։

Եւ ահա հիմնվելով այդ գործնական, առողջամիտ եզակէտի վրա, մինիստրների խորհրդի նախագահ Կոկովցեվը Պետական Խորհրդի նոյեմբերի 27-ի նիստում պաշտպանեց Դումայի օրինագիծը և արտայայտեց կառավարութեան հայեացքը այդ խնդրի մասին։ Մինիստր-նախագահը յայտնեց հետեւեալը.

Պետութեան հիմնական օրէնքի 3-րդ յօդուածը համարում է ռուսաց լեզուն պետական, բայց չէ բացառում տեղական լեզուների գործածութեան հնարաւորութիւնը։ Քաղաքային մտահոգութեան բարձրացումը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ այդ մտահոգութիւնը վարելու համար հրաւիրված են հասարակական տարրերը. բայց Լեհաստանի քաղաքային ազգաբնակութիւնը բաւականաչափ ծանօթ չէ ռուսաց լեզուին։ Ճիշդ է, այդ երեւոյթը ցաւալի է, բայց պէտք է հաշուի առնել։ Անհրաժեշտ է զբաղել հասարակական ոյժերը դէպի քաղաքային մտահոգութիւնը—ահա ներկայ օրինագծի միակ նպատակը։

Կառավարութեան այս հայեացքը առարկութեան է հանդիպում. վախենում են, որ դրանով կը քանդվի պետական լեզուի միութիւնը և դա կարող է առաջ բերել ֆեդերացիա. սակայն պետութեան մէջ ոչ մի տեղ ազգաբնակութիւնը այնպէս միաձուլված հոծ չէ, ինչպէս Պրիվիսլինսկայա երկրում (Լեհաստանում), ուստի և անարդարացի չի լինի թոյլ տալ բանաւոր բացատրութիւններն անել նաև լեհերէն, քանի որ օրինագծի նպատակը (քաղաքների մտահոգութեան բարձրացումը) հնարաւոր չէ այլ կերպով։ Ուստի յանուն այն գլխաւոր նպատակի, որ ունի օրինագիծը, պէտք է գտնել ժամանակաւորապէս թոյլատրել լեհական լեզուի գործածութիւնը դումայի վիճաբանութիւնների ժամանակ։ Դուցէ, երբ ժամանակի ընթացքում քաղաքային մտահոգութիւնը բարձրվի, կարելի կը լինի միակ գործածական դարձնել ռուսաց լեզուն։

Մինիստր-նախագահը շօշափեց այդ օրինագծի և մի այլ համակրելի և օգտակար կողմը։ Նա ասաց, որ եթէ մենք երազում ենք սլավեան վտակները միացնել ռուսական ծովի մէջ, պէտք է ընդունել, որ ներկայ օրինագիծը աւելի է մօտեցնում մեզ վտակների այդ միացման շաւղին։

Թւում էր, թէ նոյնիսկ պետական առողջ քաղաքականութեան տեսակէտից կառավարութեան այս հայեացքը, որ, սակայն, զուտ գործնական է և քաղաքականութիւնից հեռու, պէտք է թեւադրէր Պետական Խորհրդին ընդունել օրինագիծը, որովհետև ենթադրել թէ Լեհաստանի մի քանի քաղաքների դումաներում լեհական լեզուի գործածութիւնը, այն ևս բանաւոր վիճաբանութիւնների ժամանակ, կարող է որևէ հարուած հասցնել պետական լեզուին, աւելի քան անհեթեթութիւն է։ Սակայն Պետական Խորհուրդը այլ կերպ մտածեց և 94 ձայներով ընդդէմ 74-ի մերժեց օրինագիծը։

Եւ այդ որոշմամբ Պետական Խորհուրդը ցոյց տուեց, որ կառավարութիւնը աւելի ազատամտօրէն է մտածում, քան պետութեան գերագոյն պարլամենտական տեսանը։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 նոյեմբերի

*Պարիզ.—Դումէրգը պալատում կարդաց կաբինէտի դեկլարացիան, որի մէջ մատնանշված է, թէ կառավարութիւնը յենվելու է բացառապէս հանրապետական մեծամասնութեան վրա և պաշտպանելու է հանրապետական հաստատութիւնները անհաշտելի թշնամիների սաստիկ յարձակումներից, առաջարկելով ծածկել ազգային ինքնապաշտպանութեան արտակարգ ծախքերը շատ քիչ տարիների ընթացքում. աշխատելու է, որպէս զի եկամտային հարկը, որ իրաւամբ ընկնելով բոլոր քաղաքացիների վրա, գործադրվի 1914 թ. եկամտի հետ միասին. ձգտելու է անցկացնել դրամագլուխների վրա հարկ նշանակելը զինուորական օրէնքների ծախքերը հանդցնելու համար. ջանալու է հաշտեցնել պալատին և սենատին ընտրական բարեկարգման խնդրում. շարունակելու է սերտ սրտագին աշխատակցութիւն Ռուսաստանի հետ. աշխատելու է զարգացնել Անգլիայի հետ յետագայ վստահութիւն ու մերձեցումն. միւս պետութիւնների հետ անյողդողդ պահելու է բարի յարաբերութիւններ։

Դումէրգը ասում է, թէ անհրաժեշտ է, որ ձախակողմեան հանրապետականները միանան. կաբինէտը լոյսով կերպով գործադրելու է երեքամեայ զինուորական ծառայութեան օրէնքը։

Կայօի հարցին Դումէրգը պատասխանում է, որ փոխառութեան օրինագիծը յետ է առնված։

Պալատը 312 ձայնով ընդդէմ 141-ի վստահութիւն է յայտնում կաբինէտին։

—

Պարիզ.—Բրիանը առանց քուէարկութեան ընդունեց պալատի դեմոկրատիկ համաձայնութեան խմբակին։

—

Բերլին.—Բիւլէի յետագայ քննութեան ժամանակ Էլզաս-Լոթարինգիայի լանդտագի նախագահ Բիլլինգ քննելով Ցաբէրնի միջադէպն, ասաց, որ ֆրանսիական տիրապետութեան ժամանակ էլզասցիները վայելում էին քաղաքական մեծ ազատութիւն, քան այժմ, երբ նրանք գրաւում են պետական իրաւական դրութիւն. սակայն Էլզաս-Լոթարինգիան երբէք չի մոռանայ այն միաբանութիւնը, որով բէյխստագի ճնշող մեծամասնութիւնը կանգնեց նրա կողմը. եթէ էլզաս-լոթարինգցիները կորցրել են վստահութիւնը առ կառավարութիւնը, յամենայն դէպս ձեռք բերին այդպիսի վստահութիւն դէպի գերման ժողովուրդը։

—

Վիէննա.—Աւստրիական պատգամաւորութիւն։ Սկսվեցին վիճաբանութիւններ արտաքին գործերի մինիստրութեան բիւջէի առիթով։ Սօցիալիստ էլենտիօգէնը կարծում է, որ Աւստրո-Ունգարիան պէտք է ձեռքերը ծալելով սոսկ հանդիսատեսի դերում մնայ. խաղաղութեան պահպանումը—աւելի շուտ գերմանական դաշնակցի ծառայութիւնն էր, քան Բերխտոլդի. աւստրիական արտաքին քաղաքականութիւնը ուժեղացրեց սերբերի մահացու ատելութիւնը և թշնամացրեց Ռումինիային, դժգոհութիւն պատճառեց Գերմանիային, զայրացրեց ամբողջ Եւրոպային։

—

Հռոմ.—Պալատ։ Սօցիալիստ-բարեխորհրդիչ Բիսոլատին յայտնում է, որ նա և իր բարեկամները մնում են օպոզիցիայի մէջ։ Հռետորը յորդորում է արմատականներին միանալ սօցիալիստների հետ կաբինէտին ներհակելու համար։

—

Հռոմ.—Քննելով պատասխան-ուղերձը, կաթոլիկ կամէրլենգին ասաց, որ կաթոլիկ կազմակերպութիւնները միանգամայն լոյսեալ են, սահմանադրական ու հայրենասէր։ Հռետորը հաւատում է, որ Զիոլիտին չի փոխի իր ծրագիրը, որ հիմված է դեմոկրատիզմի վրա և ոչ թէ հակակղերականութեան վրա։

Արտաքին գործերի մինիստրի օգ-

նականը, պատասխանելով սոցիալիստ Լուչչի հարցին՝ թէ մտադիր է, արդեօք, կառավարութիւնը մասնակցել Գերմանիայում սկսված շարժմանը յօգուտ հազարաւոր ռուս քաղաքական բանտարկեալների, ասաց, որ կառավարութիւնը չէ կարող միջամտել հարևան երկրի ներքին քաղաքականութեան հարցերին։

—

Սոֆիա.—Բոլգարական գործակալութիւնը հաղորդում է, որ ընդդիմադիրների շրջաններում հաստատացնում են, թէ օպոզիցիայի մի քանի խմբակները պաշտպանելու են կառավարութեանը։

—

Բելգրադ. — Հրատարակվեց հրաման վերջին պատերազմի ժամանակ զէնքի կանչված զօրքերին արձակելու մասին։

—

Տոկիո.—Սեղանաւորների խնճոյքին ֆինանսների մինիստրը յայտնեց, որ 1915 թ., շնորհիւ ծախքերի կրճատման, կը մնայ 130 միլիոն ազատ գումար։ Երկրի տնտեսական դրութիւնը մինիստրը գտնում է նպաստաւոր։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Պատրիարքի ժամանումը
Կ. Պոլիս, 9 Նոյեմբեր

Սրբազան Զաւէն արքեպ. տաժանագին ու երկարատև ուղևորութենէ մը յետոյ երկու օր առաջ Կ. Պոլիս հասաւ։

Պատրիարքը կուգայ Կ. Պոլիս՝ իբր վերջին կենդանի վկան Հայաստանի արգահատելի վիճակը ներկայացնելու Բ. Դրան։ Իր ուղևորութեան ընթացքին իրեն նկատմամբ ցոյց տրուած բոլոր հակակրական ցոյցերուտակ ընդունմարած է թշուառութիւնը այն խեղճ ու տառապող ժողովուրդին։

Իր տեսածներէն և լսածներէն դատելով, թշուառութիւնը Բաղէշի կուսակալութեան սահմաններուն մէջ անհամեմատ է, քան ուէ տեղ։ Հոն որոշապէս կը տեսնուի հայահալած քաղաքականութիւնը կառավարութեան։ Բաղէշի և Մուշի շրջանակը ամենէն խոր մէկ անկիւնը ըլլալով Հայաստանի, հոն կառավարութիւնը և կեղեքիչները ամենէն աւելի ազատութեամբ ու անպատիժ կը գործեն։

Հետևաբար պատրիարքը Կ. Պոլիս եկած է դառն տպաւորութեան տակ, որ անշուշտ չի կրնար փարատիլ կառավարութեան կողմէ ընծայուած պատիւներով և շողոքորթութիւններով, որոնք ցոյց տրուեցան պատրիարքին անձին նկատմամբ Դիարբէքիրէն մինչև Կ. Պոլիս։

Կառավարութեան՝ հայոց պատրիարքը շրջապատելու այս փորձերը անկեղծ ըլլալէ շատ հեռու են. և անշուշտ ոչ ոք միամիտ է հաւատալու հաւատ թէ անկեղծ սիրոյ մը կամ կատարեալ յարգանքի մը արտայայտութիւններն են այդ ցոյցերը։ Ընդհակառակը՝ շատ մը պատճառներ ունինք կասկածելու թէ կառավարութիւնը կուզէ պատրիարքը շահել և անիկա իր քաղաքականութեան ծառայեցնել։

Զաւէն պատրիարք՝ անշուշտ այնքան միամիտ չէ գործիք ըլլալու համար կառավարութեան ձեռքը։ Իր անդրանիկ քարոզը, որ Կ. Պոլիս հասած օրը հանդիսաւոր թափորով Մայր եկեղեցին առաջնորդուած պատուն ըրաւ, և այն խօսքերը, որ յաջորդ օրը իր սահմանադրական ուխտը կատարած ատեն ըրաւ, կը շեշտէին իր անյողդողդ ու աննկուն նկարագիրը և քիչ մը շեշտուած տիրականութիւնը։

Անիկա գաւառի սիրտը, գաւառացիներու բարեկամ համար աշխատելու հաստատ մտադրութեամբ կուգար իր պաշտօնին, և կառավարութեան կեղծաւոր ցոյցերը չէին կրնար զինքը վրիպեցնել գծուած որոշ ուղիէն ու որոշուած ծրագիրէ։

Ասով հանդերձ՝ պէտք է խոստովանիլ թէ Զաւէն պատրիարք՝ իր առաջին քայլափոխերուն իսկ պիտի գտնուի դէմ առ դէմ կառավարութեան, և ճակատ առ ճակատ պայքարի մը պիտի մտնէ անոր հետ։

Հայկական բարենորոգմանց խնդիրը մը-տած է նոր փուլի մը մէջ։ Ռուս և գերման համաձայնութիւնը տագնապի մատնած է Թիւրքիոյ վարիչները։ Բովանդակ թիւրք մամուլը, հիմա ուժգնութեամբ ու սաստկութեամբ կը դրդռէ հանրային կարծիքը ընդդէմ եւրոպական կօնսորցիոն, որ բոլորովին անընդունելի և պետութեան անկախութեան դէմ կը համարի։

Այս նեղ դրութեան մէջ, ինչպէս երբեմն Համիդ փորձած է, Թիւրքիոյ վարիչները կը մտածեն հայոց բերնով հերքել տալ իրենց թշուառութիւնը և յայտարարել տալ թէ հակակշիռ կամ եւրոպական միջամտութիւն չենք ուզեր։

Իզմիրլեանի մեծութիւնը հոն եղաւ, որ տարի ու կէս յամառեցաւ այս տեսակ թուղթ մը չստորագրելու։

Հիմա, 18 տարիներ յետոյ, դարձեալ պատմութիւնը կը կրկնուի, և հաւանօրէն Զաւէն պատրիարքի վրայ ճնշում ի գործ պիտի դրուի՝ այս տեսակ թուղթ մը տալու յանուն հայ ազգին։

Զաւէն պատրիարք ապահովաբար այնքան տխմար չպիտի ըլլայ այս տեսակ թուղթ մը տալու համար, սակայն խնդիրը է թէ իր ընդդիմադրութիւնը մինչ կերպով պիտի վարձատրուի առաջիկային։

Իզմիրլեան հաւատաց թէ Եւրոպայի ներդաշնակութիւնը կատարեալ էր և հայկական բարենորոգումները անպատճառ պիտի գործադրուէին։

Իր յուսախաբութիւնը սոսկալի եղաւ։

Եւրոպա վերջին պահուն անզօր եղաւ իր ծրագիրը ընդունել տալու, կամ գործադրել տալու, վասնզի Համիդը քաջալերող կառավարութիւններ պահուն գործօն մասնակցութենէ և նաւային ցոյցի մը մասնակցելէ հրաժարեցան։

Եթէ Զաւէն պատրիարք ալ այս դժբաղդութեան պիտի ենթարկուի, այն ատեն իր պայքարը անօգուտ պիտի ըլլայ և աւելի լաւ է, որ այդ պարագային անիկա կողմնակի ու անուղղակի միջոցներով խուսափի կատարելէ կառավարութեան պահանջները, առանց սակայն ուղղակի ընդդիմադիր հանդիսանալու, վասնզի կընայ ըլլալ որ դարձեալ... առանձին մնանք։ Շառայ

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՆՄՈՌԱՑ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Ո՞ւմ մտքից կարող էր անցնել, որ Քալանթարի սեղջանակ նկարն այսքան վաղաժամ պիտի տպէր «Մշակում»։ Ո՞վ կարող էր մի բօպէ ունենալ այն տխուր միտքը, թէ Քալանթարն այդպէս շուտ պէտք է թողնէր յաւիտենականապէս հայ հասարակական ասպարէզը։ Սակայն ո՞ր մէկ անապատելին հնարաւոր չէ այս աշխարհում։

Սգաւոր «Մշակը» որբացաւ, նա կորցրեց իր Քալանթարին։

Հայ լիբերալիզմի ամենափայլուն ասողը մարեց։

Հայ գիւղացիութիւնը զրկվեց իր մեծ ու սիրելի ուսուցչից։

Հայ կուլտուրան չունի այլ ևս իր անխոնջ ու ժրաջան մշակը։

«Մշակ», հայ լիբերալիզմ, հայ գիւղացիութիւն և հայ կուլտուրա—սրանք այն չորս ընդարձակ ասպարէզներն են, ուր Քալանթարը աւելի քան քառորդ դար շարունակ նուիրված, արդիւնալից աշխատանք է թափել առանց մի բօպէ հանգիստ առնելու և ուր նրա կատարած դերը եղել է առաջնակարգ ու ինքնուրոյն։

Գ. Արծրունու ժամանակ հայ իրականութեան մէջ հասարակական յարաբերութիւնների և հասարակական այլևայլ խաւերի տարբերաւորումը դեռ չէր ստացել իր որոշ, մեկին ու կազմակերպված վերջնական ընոյթը։ Երկրում ծիլ առող տնտեսական կենսունակ ոյժերը դեռ չէին հասել զարգացման այն աստիճանին, որ կարողանային ցրել հասարակական յարաբերութիւնների և տնտեսական տարբեր տարրերի նկատմամբ տիրող հին, տարերային հակացողութիւնները։ Սակայն այդ կենսունակ ոյժերն արդէն զգալ էին տալիս իրանց գոյութիւնը. և այն առաջին խոչընդոտները, որոնց նրանք հանդիպում էին իրանց ճանապարհի վրա հին կարգերի ու տիրող հին կօնցեպցիաների կողմից, մի-մի նշանակալից ազդանշաններ էին հնի և նորի միջև անխուսափելիօրէն տեղի ունենալիք զօրեղ բախումներ։ Գ. Արծրունին իր «Մշակով» ծայր տուեց այդ բախմանը, սակայն տիրող հասարակական պայմանները դեռ նրան հնարաւորութիւն չէին տալիս որոշակի կերպով ըմբռնելու այն ընթացքն ու համապատասխան ուղղութիւնը, որով պիտի ընթանային հասարակական կենսունակ ոյժերը։ Այս պատճառով էր, որ Արծրունին ստիպված էր հասարակական պայքար մղել բազմաթիւ դիրքերից և բազմաթիւ ուղղութիւններով, հարուածելով իր զօրեղ դրչով անխտիր թէ շահագործող հարուստին, թէ խաւարամիտ քաղքենուն, թէ գիւղական վաշխառուին, թէ լճացած ինտելիգենտին և թէ անտարբեր աշխատաւորին։ Նա իր մարտադրշի վրա իդեալիզմն էր դրոշմել և յանուն այդ իդեալիզմի էր պայքար մղում։

Արծրունու մահից յետոյ հրապարակ իջաւ Քալանթարը։ Ժամանակի հետ հասարակական յարաբերութիւններն էլ տարբերաւորվել, աւելի որոշ ու համեմատաբար կորուկի կերպարանք էին ստացել։ Երբ «Մշակի» դեկը Քալանթարին յանձնվեց, նա, իր ժամանակի հարազատ զաւակը լինելով, հասարակական կեանքն անալիզի ենթարկելու հիանալի կարողութեամբ և ըմբռնումներով օժտված լինելով, աւելի շրջահայեաց ու ըէալ գտնվեց և կազմակերպվող կենսունակ դասակարգի—հայ բուրժուազիայի—գլուխն անցնելով՝ հայ առաջադիմական լիբերալիզմի իդեօլոգը հանդիսացաւ։ Այսպէսով «Մշակն» էլ յարմարվեց կեանքի նոր պահանջներին ու աւելի ըէալ կերպարանք ստացաւ։

Միայն «Մշակը» չէր, որի միջից Քալանթարը հնչեցնում էր 20 տարի շարունակ իր ազդու ձայնը։ Նա ամենուրեք էր, ուր ժողովված էր մի համախմբութիւն որևէ հասարակական շահաւոր գործ տեսնելու, ազգային, քաղաքական, կուլտուրական թէ տնտեսական որևէ հանրօգուտ աշխատանք կատարելու։ Ո՞վ կարող է յիշել մի ազգային ժողով, մի կրթական համագումար, մի կուլտուրական համախմբութիւն և կամ հասարակական որևէ հաւաքումն, ուր բազմաշխատ Քալանթարը ներկայ չը լինէր և իր ազդու ձայնը չը բարձրացնէր։

Սակայն Քալանթարի հասարակական գործունէութիւնն այդքանով էլ չը բաւականացաւ։ Նրա մէջ գտնված հասարակական արդիւնաւէտ գործ կատարելու անհատնում եռանդն ու զօրեղ թափը մղեցին նրան նաև դէպի գիւղ, դէպի գիւղացիութիւնը, մեր հասարակութեան այն խղճուկ տարրը, որ միշտ մոռացված է եղել ամենքից, միշտ լքված, արհամարհված ու դատապարտելի անուշադրութեան մատնված։ Դեռ ևս նահապետական կարգերով ապրող, տգիտութեան խաւարի մէջ խարխափող և չքաւոր խեղճութեան ճիրանների մէջ զալարվող այդ տարրը պոռացող պահանջ էր զգում կրթութեան, լուսաւորման և տնտեսական բարեւաւման, և, Քալանթարի խորը համոզմունքով, գիւղացի տարրի կենսունակութիւնից մեծ կախումն ունէր քաղաքի զարգացումը։ Այդ թարախոտ վէրքը դարմանելու համար նա չը խնայեց ոչ եռանդ, ոչ աշխատանք և ոչ անձնուրիրութիւն. նա տուեց գիւղին այն, ինչ հնարաւոր էր իր մշտական դասախօսութիւններով, փորձնական դասերով և գործնական աշխատանքներով. նա հնար եղածի չափ բարձրացրեց գիւղական մտքի մակարդակը, և այդ նկատմամբ Կովկասի հայ գիւղացիութիւնը խիստ մեծ երախտիք ունի դէպի իր մեծ ուսուցիչը, որ իր տեսակի մէջ իրօք որ մի հատիկ էր։ Եւ եթէ հասարակական գործունէութեան միւս ասպարէզներում հրապարակ գան գործիչներ, որոնք, այսպէս թէ այնպէս, փոխարինեն Քալանթարին, ապա նրա գիւղական գործունէութեան մէջ հազիւ թէ որևէ մէկը կարողանայ փոխարինել նրան։

Հայ հասարակական ասպարէզը խիստ մեծ կարիք ունի այնպիսի անձնուէր, ժրաջան ու արդիւնաւէտ գործիչների, ինչպիսին Քալանթարն էր։ Դժբաղդաբար հայ ազգաթիկ իրականութիւնը դիւրութեամբ չէ, որ կարողանում է ստեղծել այդպիսի արժէքաւոր ոյժեր, մինչդեռ բոլշևիկեան անսպասելի մահը մի ակնթարթում խլում է նրանց ժողովրդի ծոցից դեռ վաղաժամ, դեռ իրանց հանրօգուտ աշխատանքի եռանդը չը սպառած։

Անսպասելի կորուստն առհասարակ միշտ ծանր է լինում. այս անգամ էլ խիստ ծանր էր կորուստը, այն ևս մի սրառուչ մոմենտում։ Հայ ազգը, որ վշտի ու ցաւակցութիւնների հեղեղ թափեց Քալանթարի մահվան համար աշխարհի բոլոր կողմերից, դեռ երկար պիտի ցաւի այդ մեծ կորուստի վրա և հասարակական ասպարէզում դեռ շատ երկար պիտի զգալի լինի Քալանթարի պակասը։

Յաւերժական հանգիստ բազմաշխատ գործիչին։ Թող նրա յիշատակը ընդ միշտ անմոռաց լինի։

Ա. Զ.
Ժընև

Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Կան մահեր, որոնք անցնում են աննկատելի՝ իբրև սովորական երևոյթ. բայց և կան մահեր, որոնց մարդ չէ ուզում հաւատալ, որ անբնական են թւում՝ իբրև չափազանց անգութ, անհանդուրժելի։ Վերջին տեսակից է Ալ. Քալանթարի մահը։ Սաստացյ հեռագիրը, կարդացի և մնացի քարացած. աչքերիս չէի ուզում հաւատալ. գուցէ հեռագիրն աղաւաղված է, գուցէ կեղծ է,—մտածում էի. շտապեցի հեռագրատուն և ստուգիրս յետոյ միայն զգացի անողոք ճշմարտութեան ծանրութիւնը։ Ուրեմն կորա՞ւ, ոչնչացա՞ւ մեզ համար այն անհուն եռանդը, այն մարմնացած սէրը դէպի հայ ժողովուրդը և ընդհանրապէս դէպի մարդիկ, այն չէնտրլէն հոգին, այն բազմակողմանի կրթութիւնը, այն խաղաղ, անուշ, ինտելիգենտ զրուցընկերը, ուսուցիչը, կուլտուրայի այն իսկական առաքեալը. այլ ևս չենք լսելու նրան, այլ ևս չենք տեսնելու նրա գործը։ Դա միմիայն «Մշակի» կորուստը չէ, դա միայն հրապարակախօսութեան կորուստը չէ, միմիայն հայ ընթերցող հասարակութեան կորուստը չէ, աւելի մեծ կորուստն է հայ սրտանջող գիւղացիութեան, իրանց անանձնական նեթանկանի բարեւաւման մասին մտատանջվող խեղճերի... Կորաւ մի մե՛ծ բարեկամ, ամենքիս բարեկամը, ընդհանուրի հոգատար բարեկամը։

«Մշակին» նոյնպէս խոշոր հարուած հասաւ. «Մշակի» երկու գլխաւոր դեկավարները — Առաքելեան և Քալանթար — իրար լրացնում էին. մինչ վաւրուն, միշտ երիտասարդ, սանգվինիկ Առաքելեանը շանթեր էր թափում մեր կեանքի յոռի երևոյթների դէմ, Քալանթարն իր մեղմութեամբ կանոնաւորում, որոշ ընթացք էր տալիս «Մշակում» արծարծվող հասարակական հարցերին. այժմ չը կա՞յ այդ բէգուլեատորը...

Եւ այդ պակասն ամենից զօրեղ կերպով զգալի պէտք է լինի պ. Առաքելեանի համար, որին թոյլ ենք տալիս մեզ ցանկանալ նախկին եռանդը, նոյն պայքարող ոգու անվհատութիւնը՝ միացած ողբացեալ Քալանթարի շրջահայեաց տէմպերամենտի հետ։

Արշակ Աթայեան
Սպահան

ՄԻ ԱՍՏՂ ԷԼ ԸՆԿԱՒ

Ծանր է հարուածը...

Եւ ծանր է ոչ միայն «Մշակի» սգաւոր ընտանիքին, այլ ամբողջ հայ հասարակութեան։ Չը կայ այլ ևս այն հաստատուն սիւնը, որ երկար տարիներ իր ուսերի վրա կրում էր ամենօրեայ թերթի՝ «Մշակի» ամբողջ ծանրութիւնը։ Չը կայ անկեղծ հայրենասէրը, անկաշառ ու շիտակ ազգասէրը։ Կորուստը չափազանց զգալի է, իսկ վերջը անդարմանելի։ Երկար տարիներ հետևած լինելով հանգուցեալ Ա. Քալանթարի հրապարակագրական, մանաւանդ հասարակական գործունէութեան, ինձ միշտ զարմացրել է նա իր կամքի հաստատութեամբ, ուժեղ բնաւորութեամբ և անվհատակելի աշխատանքով։ Նա մի պայծառ աստղ էր հայկական երկնակամարի վրա, բայց աւա՜ղ, որ նա ընկաւ վաղաժամ, ընկաւ պայծա՜ռ, շա՜տ պայծառ դիծ թողնելով իր ետևից։ Եթէ կայ մահ, որ անմահութիւն է, դա Քալանթարի մահն է։ Ճիշդ է, նրա հոգեղէնը հանգչում է մոռթ ու խոնաւ գերեզմանի մէջ, բայց հոգին սաւառնում է հայութեան մէջ, նրա անունը հնչում է և շատ երկար տարիներ պիտի հնչէ հայ ժողովրդի զանազան խաւերի բերանում։ Եւ հայութիւնը իրաւունք ունի պարծանքով ասելու՝ «Տեսէք, ես կարող եմ Քալանթարի նման հոյժկու ու հսկայ զաւակներ ծնել։»

Թող անմահ լինի իր անունը և անթառամ՝ իր գործունէութեան յիշատակը։

Ա. Ց. Մուրադեան
Սամարղանդ

ՄԻ ՊԱՅԾԱՌ ԱՍՏՂ ԷԼ ԸՆԿԱՒ

«Մշակիս» և նրա համակրողների աչքերի արտասուքը դեռ ևս չէին ցամաքել խմբագրութեան վաղամեռ անդամ Ց. Տէր-Մարկոսեանի մահվամբ, նորից գալիս ենք արտասուալից աչքերով ողբալու Ա. Քալանթարի անակնկալ, յանկարծական մահը։ Օ՜, ծանր և անբուժելի է հարուածը։ Խեղճ Վրթին, կոտրեցիր ընդմիշտ վրթնդ, որ այնքան գեղակար գծագրում էր սիրած հայ ժողովրդիդ պատկերը։ Զախջախվեց, փշրվեց գրիչդ, հէդ Քալանթար, որ իսպառ չը զարդարի «Մշակի» էջերը սիրուն, սահուն գրուածներովդ։ Չէ՞ որ դու միշտ ժողովրդի ցաւերիցն էիր գրում, խօսում, ժողովրդի տառապանքների երգի՛չ։ Երբեմն, կարծես աստանդական դարձած ի սէր հայ ժողովրդի, պտոյտ էիր գալիս նրա խաւերի մէջ։ Ի՜նչ սփոփանք և ի՜նչ մխիթարութիւն էին քեզ համար, երբ տեսնում էիր հայ գիւղացու՝ եռեսիդդ վաղելը՝ խրատներդ լսելու համար։ Ո՞վ միայն հեռուից խօսքով էր քարոզում առանց ժողովրդի երես տեսնելու, առանց նրա նիստ ու կացը և հոգեբանութիւնն իմանալու, դու խօսքը գործի հետ միացրած առաջնորդում էիր նրան խաւարից դէպի լուսաւոր ապագա։ Հայ գիւղացու նոր առաքեալ էիր, խաւար վայրերի լուսաւոր քարոզիչ։ ով կը փոխարինի քեզ։

Մեծ վիպասանի գերեզմանի վրա պատրաստվել էիր խօսելու, արժանաւոր մարդու արժանիքները դրուատելու, բայց... մեղմ ու անուշ եղանակին տաք վերարկուդ ի զուր չէիր հագել. չէ՞ որ սեռերեոյթ թշնամին սողոսկել էր նրա մէջ՝ մահաբեր մանգաղը ձեռին առաջնորդելու քեզ գերեզմանատուն, մահերի թագաւորութիւնը. և երբ դու պէտք է բերանդ բաց անէիր, վրա պրծաք քո վրա և կարեց կեանքիդ ու լեզուիդ թելը. դու ընկար յաղթահարված՝ դարանակալ ոսոխից։ Անհերեոյթ հարուածը սարսափեցրեց ամենքին։ «Ցունդ քանդվի, մահ, այդ ի՞նչ արեցիր»։

Ա. Բունիաթեան
Աստրախան

ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ՄԱՐԴԸ

Չը կայ այլևս Ալ. Քալանթարը։

Անողոք մահը նրան տարաւ հէնց այն ժամանակ, երբ աւելի քան պէտք ունէինք նրան, երբ հրապարակի վրա շատ քիչ է մաքուր սրտով գործողների թիւը։

Ծանր է Ալ. Քալանթարի հայ ազգը կորցնում է իր ամենալաւ աշխատաւորին, հայ ազգի ցաւերով տարված և դարման փընտռող ու գտնող ժրաջան գործչին։

Չը կայ նրան փոխարինող, չը կայ բազմակողմանի ընդունակութիւններով օժտված նման անձնուրաւորութիւն։ Ոչ թէ «Մշակի» խմբագրութիւնն և հանգուցեալի ընտանիքն են միայն որբանում կորցնելով մի այդպիսի գանձ, այլ ամբողջ հայ ազգութիւնը, որովհետև նա ամենից առաջ պատկանում և նուիրված էր իր ցաւատանջ ազգին ու նրա համար էլ վաղաժամ զոհ գնաց։

Դարե՞ր կանցնեն, բոլորն էլ կը գնան այս աշխարհից, բայց Ալ. Քալանթարի գործերը որպէս մնայուն յուշարձան միշտ կան, որպէս լուսաւոր վարոս շատերին պիտի առաջնորդեն դէպի շնորհ ու ճանապարհ։

Խառնելով մեր արտասուքը շատերին, ասում ենք. «Մխիթարվենք նրանով, որ նրա հոգին ապրում է մեր մէջ և սիրված է համայն ազգից»։

Սօֆիա և Սմբատ Ադամեաններ
Սարգվար

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐԸ

«Մշակի» հրատարակիչ Յովհ. Տէր-Մարկոսեանի մահվանից յետոյ, սա երկրորդ մեծ և սոսկալի հարուածն էր, որ ստացաւ «Մշակը» ի դէմս Ալէք. Քալանթարի մահվան։ Սակայն առաջին կորուստի հետ գուցէ դեռ կարելի լինէր հաշտվել, իսկ այս վերջինի՝ վիթխարի ուժի կորցնելովը, չենք կարծում հայ ժողովուրդը, հայ գիւղացիութիւնը յետ այսու կարող լինի իր անհուն վիշտը ամոքել և անդուզական գործիչին փոխարինել այլով։

Այո, խոնարհվում ենք բնութեան օրէնքի առաջ. սակայն չեմ կարող չը ցաւել ու վիշտ չը յայտնել առ այն, որ պաշտելի Ալէքսանդրի մահվամբ որբացաւ «Մշակը», այն օրգանը, որ հանգուցեալը 1873 թ. սկսած ողողում էր իր կրակոտ, բեղուն, լաւագոյն օրերի խղճն արտայայտող յօդուածներով. որբացաւ այն «Մշակը», որ 1893 թ. (№ 2-ից սկսած) մինչև իր մահվան օրը կրում է իր ուսերի վրա որպէս Արծրունու դրօշակ և ոգի ու կենդանութիւն էր տալիս իր աշխատակիցներին, ոգևորում ու խրախուսում էր իր թղթակիցներին։

Իրօք տապալվեց այն վիթխարի սիւնը, որ շուրջ 40 տարի անընդհատ գործում էր մեր խոպան անդաստանի համար։ Մարեց այն լուսատու ճրագը, որ իր ճառագայթներով լուսաւորում էր հայ գիւղացու խրճիթները։

Սուգը ընդհանուր է, և անփոխարինելի է հայ ժողովրդի կորուստը։

Մեզանից բաժանվեց այն անձը, որ նոյն իսկ իր հակառակորդների կողմից էլ յարգանքի էր արժանանում։

Այլևս չը կայ նա, որ իր բազմակողմանի պատրաստութեամբ, առաջադիմական ուղղութեամբ, անբասիր վարքով և ժողովրդասիրական ընաւորութեամբ մեզ օրինակ էր ծառայում։

Ընդ միշտ ընկաւ այն հսկան, որի հովանու տակ մեզ երջանիկ ու հպարտ էինք համարում։

Օ՜ դաժան մահ... ինչու՞ քո գիրկը նետեցիր տիպար աշխատաւորին. ինչու՞ մեզ զրկեցիր նրա հովանուց. և վերջապէս չէ՞ որ նա դեռ ևս ծրագիրներ ունէր իրագործելու, որի վայելելուց զրկվեց հայ ժողովուրդը։

Չեմ կարող արտասուքով չը յիշել մեր վերջին տեսակցութիւնը Էջմիածնում համազգային յօբելեանական հանդէսների։ Երբ հանգուցեալը խօսում էր, զգում էի, որ դիմացս կանգնած է գաղափարակցութեան մի մարմնացում, անկեղծութեան ու ազնուութեան մի տիպար. յորդորում, խրախուսում էր ինձ՝ գործելու, սակայն շիտակութեամբ ու արդարամտութեամբ...

Այո, հաշտվում եմ անողոք մաքի հետ, բայց միաժամանակ ինձ մխիթարված եմ համարում, որ հանգուցեալը իր ժողովրդի համար արեց այն բոլորը, ինչ որ կարելի էր անել 40 երկար ու ձիգ տարիների ընթացքում. այդ ըմբռնմամբ՝ հանգուցեալը իր պարտքը կատարելով իջաւ գերեզման, որով և հայ ժողովուրդը, եթէ պարտաճանաչութեան զգացմունք ունի, ամենևին մոռանալու չէ իր ցաւերը ամոքող գրչի զինուորին։

Ես ևս լցված լինելով դառն կսկիծով ու խորունկ վշտով՝ այսու յայտնում եմ խորին ցաւակցութիւնս հանգուցեալի գաղափարական ընկերոջը՝ Հ. Առաքելեանին և «Մշակի» բոլոր աշխատակից ու թղթակիցներին, որոնց համար պաշտելի էր հանգուցեալը։

Ծունկ եմ խոնարհում անկուն վաստակաւորի շիրմի առաջ, խոստանալով կատարել այն բոլոր պատուէրները, որ ստացայ նրա մահվանից մի շաբաթ առաջ։

Հանգիստ ոսկորներիդ, անմոռաց գործիչ։

Խորին մեծարանք պաշտելի շիրմիդ։

Աստ. Վարդանեան
Թաղա գիւղ

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նուխի քաղաքի հայոց եկեղեցական ծխական երկսեռ դպրոցի երկսեռ ուսուցչական խումբը, հոգաբարձական կազմը և քաղաքի քահանայական դասը լիազօրելով ինձ՝ ինդրեցին արտայայտել լինել իրանց անկեղծ ցաւակցութեանց և վշտակցութեանց «Մշակիս» խմբագրատեղ, բազմամեայ վաստակաւոր, ժողովրդական բազմարդիւն հարազատ գործիչ Ալէքսանդր Քալանթարի արդեսաւոր մահվան առիթով։ Հանգուցեալի յիշատակը թարմ կը մնայ մշտապէս հայ ուսուցչի, հայ հոգաբարձուի և հայ քահանայի սրտում, քանի որ իր բազմապիսի հասարակական գործունէութեան ընթացքում հանգուցեալը փոքր ծառայութիւն չէ մատուցել հայ դպրոցին, հայ վարժապետին, հայ վարժուհուն, հայ հոգաբարձուին և հայ քահանային իր մշտաբերաւ անպարծոյն, պարզ, մեկին և հարուստ բովանդակութեամբ առաջաւոր յօդուածներով, յորդորներով, ցուցմունքներով, բացատրութիւններով, բանաւոր ճառերով, քարոզներով, ճոխ դասախօսութիւններով, ատենաբանութիւններով և՝ որ առաւելն է ու առաջ։

մենագլխաւորը՝ իր իսկ անձնական գործունէութեամբ իրագործելով կեանքում իր քարոզածն ու դաւանածը։ Դպրոցասէր էր հանգուցեալը բառի իսկական մտօք, վասնզի հայ դպրոցը պիտի լինէր հայ գրի տարածողը, գրագէտ դարձնողը, իսկ հայ գրի տարածումը և հայ ժողովրդի ընդհանուր գրագիտութիւնը Ալէքսանդր Քալանթարի իղձն ու սրտի փափաքն էր։ Ահա թէ ինչպիսի սերտ և հարազատ կապով էր կապված հանգուցեալը հայ դպրոցի և դպրոցում գործող ուսուցչի, հոգաբարձուի և քահանայի հետ։ Հետեւելով երկնաւոր մեծ վարդապետի և մեծ ուսուցչի ուսուցման եղանակին՝ «նախ առնէր և ապա քարոզէր» սկզբունքը դաւանեց և շօշափելի գործնական անթիւ օրինակներով իրագործեց այդ սկզբունքը ժողովրդի մէջ և ժողովրդի համար իր իսկ անձնուէր առաքելութիւններով։ Այսպէս ուրեմն Ալէքսանդր Քալանթարը ապրեց, շնչեց և գործեց ժողովրդի համար, որպիսի կեանքը ուղղակի անմահութիւն է մահկանացու ծնվածի համար։

Նուիրեալ ուսուցչական, հոգաբարձական և քահանայական մարմնի խորին ցաւակցութիւնը վերոգրեալ տողերով արտայայտելով յարգելի խմբագրութեանդ, խնդրեմ հաղորդել այն հանգուցեալի սգաւոր ընտանիքին։

Փոխանորդ Նուիրեալ՝

Եղիշէ վարդապետ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—o—

ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Խարբերդ, 28 հոկտ.

Խարբերդի ընդհանուր հայ համայնքը միացած՝ նմանը չտեսնուած շքեղութեամբ մը տօնեց հայ գրի գիւտին 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը։

Նոր-Սմբատեան Ընկերութիւնը, Եփրատ Կոլէջի և միւս բոլոր կրթական հաստատութիւնները միացած՝ յօբելեանական կարգագիր յանձնախումբ մը կազմած էին, և այդ յանձնախումբը հաւաքաբար մասնաւոր յայտագիր մը պատրաստեց և գործի բաժանումներով ակնկալուածէն շատ աւելի կանոնաւորութեամբ մը իրագործեց։

Թարգմանչաց տօնի շաբաթ և կիրակի օրերը ամբողջութեամբ այս յօբելեանին յատկացուած էին։ Քաղաքն ու Հիւսէյնիկը միասին, իսկ Մէզրէ առանձինն կատարեց։

Կրթական հաստատութիւններուն մեծ մասը քաղաքին մէջը ըլլալուն, քաղաքի ցոյցերն ու հանդէսները աւելի ոգեւորուած և կանոնաւոր եղան։

Շաբաթ օրը քաղաքի և Հիւսէյնիկի բոլոր ուսանողները միացած ուսանողական հսկայ թափօր մը կազմեցին և Եփրատ Կոլէջէն սկսելով յաջորդաբար Կեդրոնական, Նոր-Սմբատեան և միւս բոլոր ազգային և յարանուանութենց հայ դպրոցները այցելէ վերջ շուկային մէջէն վերադարձան Վերի-Թաղի գերեզմանատունը, ուր պատուելի Վարդան շինիչ բանախօսութեամբ մը օրուան տօնն ու մեր պարտականութիւնները բացատրելէ վերջ՝ Վարդան քահանայի «Պահպանիչ»-ով թափօրը ցրուեցաւ։

Թափօրին առջեւէն կը տարուէր հայ այբ ու բենը գրուած մեծ դրօշակ մը և ս. Սահակի և Մեսրոպի մեծագիր լուսանկարները, ասոնցմէ դուրս օսմանեան դրօշակի հետ ամեն դպրոց իր յատուկ դրօշակը կը կրէր մասնաւոր խորհրդանիշերով և գրուածներով զարդարուած։ Շաբաթ օրը թէեւ անձրեւած էր, սակայն բոլոր աշակերտները զինուորական կանոնաւորութեամբ մը այս տոնցումը կատարեցին, որուն բոլոր ուսուցիչները կը հսկէին, իսկ պրոֆ. Լիւլէնճեան ալ ընդհանուր թափօրին կառաջնորդէր։ Ուսանողական թափօրին ի պատիւ՝ ֆրանսական հաստատութիւնը ֆրանսական դրօշը պարզած էր և միւս բոլոր եկեղեցիներուն ու դպրոցներուն զանգակները անընդհատ կը հնչէին։ Նոր-Սմբատեան վարժարանն ալ գեղեցիկ ծաղկեպսակ մը դրած էր այբուբենի դրօշակին վրայ։ Ուսանողները թէեւ իրենց դպրոցներուն յատուկ համազգեստ չունէին, սակայն իւրաքանչիւր դպրոց իր յատուկ գոյնն ու ժապաւէնն ուներ աշակերտներուն ձախ կուրծքերուն վրայ զարնուած. այսպէս՝ Եփրատ Կոլէջը կարմիր, Կեդրոնականը երկնագոյն, Նոր-Սմբատեանը կապոյտ, Ս. Ստեփաննոսը վարդագոյն։

Կիրակի առաւօտուն բոլոր եկեղեցիներուն մէջ ս. Սահակի և Մեսրոպի և բոլոր գրական աշխատաւորներուն յիշատակին հոգեհանդիսա կատարուեցաւ։ Եփրատ Կոլէջի գիշերօթիկներն ալ պրոֆ. Պուճիգանեանի առաջնորդութեամբ ս. Կարապետ մայր եկեղեցին մէջ տեղի ունեցած հանդիսաւոր այս արարողութեան ներկայ գտնուեցան։

Կէսօրէն Նոր-Սմբատեան վարժարանի սրահին մէջ գրագէտ Յովհ. Յարութիւնեանի (Թիկատինցի) պատրաստած ս. Սահակի և Մեսրոպի պատկերը ներկայացուեցաւ երկսեռ հասարակութեան ներկայութեանը։

Հանդիսականները ժ. 12-ին ֆրանսական կոլէժին ֆանֆարի և Նոր-Սմբատեան նուագախումբին առաջնորդութեամբ շքաթափօր մը կազմեցին և յաջորդաբար կըրթական բոլոր հաստատութիւնները այցելելէ վերջ ժ. 1-ին հասան Եփրատ Կոլէջի դարատափները, ուր Խարբերդի առաջնորդ Պսակ ծ. վարդ.-ի նախագահութեամբ շքահանդէսը բացուեցաւ տեղի ունենալու։ Շքաթափօրն ալ ուսանողական թափօրին պէս այբուբենի դրօշակով և ս. Սահակի ու ս. Մեսրոպի մեծագիր լուսանկարներով կառաջնորդուէր և նոյն մէջոցին եկեղեցիներուն ու դպրոցներուն զանգակները կը հնչէին։

Կիրակի օրը պարզ էր, և շքահանդէսին ներկայ է 6000-էր աւելի երկսեռ ժողովուրդ մը։ Պսակ ծայր. վարդ. Մէզրէի հանդէսը շուտ վերջացնելով ուսանողական թափօրով մը քաղաքի շքահանդէսին ալ մասնակցեցաւ։

Շքահանդէսը աղօթքով մը սկսաւ և յաջորդաբար աւուր պատշաճի բանախօսեցին Վարդան ք. Ասլանեան, պրոֆ. Յ. Պուճիգանեան, պրոֆ. Տ. Լիւլէճեան, Յովհ. Յարութիւնեան և Սամ. Մանուկեան։

Բանախօսութիւնները հատընտիր շաբաթականներով և ազգային երգերով կընդմիջուէին։

Նախագահ Պսակ ծ. վարդ.-ի առաջարկութեամբ յոտնկայս շնորհակալութիւն յայտնուեցաւ Վեհ. Հայրապետին և անոր արեւշատութեան համար բարեմաղթութիւններ կատարուեցան, ապա առաջնորդ հօր «Պահպանիչով» հանդէսը փակուեցաւ։

Կիրակի իրիկուն ալ Նոր-Սմբատեան վարժարանին մէջ լուսաւորութիւն և ապա Նոր-Սմբատեան նուագախումբին առաջնորդութեամբ ջահանացութիւն մը կատարուեցաւ։ Վարի-Թաղին մէջ և կրթական ու ազգային քանի մը գործիչներու տուներուն առջև յարգանքի ցոյցեր կատարեցին։ Եփրատ Կոլէջի գիշերօթիկներն ալ Վերի-Թաղին մէջ ջահանացութիւն մը կազմեցին և կրթական քանի մը գործիչներու տուներուն առջև յարգանքի ցոյցեր կատարեցին։

Կարգադիր յանձնախումբը մենակ ցոյցերով ու հանդէսներով չբաւականացաւ։ կըրթական ֆոնդին ի նպաստ հանգանակութեան մըն ալ ձեռնարկեց մասնաւոր հանգանակիչ յանձնախումբ մը ընտրելով, որուն կանդամակցին քաղաքի կարեւոր վաճառականներէն։ Հանգանակութիւնը պիտի շարունակուի շրջակայ գիւղերուն և աւանները մէջ ալ և արդիւնքը պատրիարքարան պիտի ղրկուի։ Հակառակ ներկայ մտնեսական տագնապին, հանգանակութեան համար գնահատելի ոգեւորութիւն մը ցոյց կը տրուի։ Եփրատ Կոլէջի գիշերօթիկները նախաձեռնութիւն ունեցան անպայման ամեն անհատ մասնակցելու սկզբունքը իրագործել գործնականին մէջ։ Եթէ այս ոգեւորութեամբ շարունակուի, արդիւնքը զոհացուցիչ ըլլալ կը յուսացուի։

Շաբաթ օրը շուկաները փակ էին, և Օսմ. բանքայի տնօրէն Ե. Քիւչիկեան էֆ. ալ օրուան տօնին ի պատիւ նոյն օրը Օսմ. բանկան փակ պահեց։

«Եփրատ» թերթին յատաջիկայ երկու թիւերը միացած այս յօբելեանին պիտի նուիրուին։

Մէզրէի մէջ ալ շաբաթ և կիրակի օրը ուսանողական թափօրներ, հանդէսներ լուսաւառութիւններ, առաջնորդարանի մէջ ընդունելութիւններ ու պատուասիրութիւններ տեղի ունեցան, ինչպէս նաև օրուան տօնին ի յիշատակ հայկական ճեմարանի մը բացումը կատարուեցաւ։ Վեհ. Հայրապետին շնորհած հովանաւորութեամբը, ուր բարձրագոյն դասընթացքով մը ուսուցչութեան պիտի պատրաստուին փափաքողները։

Մէզրէի մէջ կրթական ֆոնդին և ճեմարանին համար առանձին հանգանակութիւն կը կատարուի։

Արմէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԲՈԽԻ ՈՃԻՐ

—

Ամբոխն ունի մի անյաղթելի ձգտիչ ոյժ, որին յաճախ ենթարկվում են զօրաւոր կամքերն անգամ։

Ինչպէս բացառիկ անհատներն են քշում իրանց ետևից ամբոխին, նոյնպէս և ինքն ամբոխն ընդունակ է հերոսանալ անհատների համար։

Փորձեցէք մի վայրկեան կանգ առնել բազմամարդ փողոցում և նայելով դասաբկ երկնքին՝ գոռալ.

— Փէ՛ղ, փէ՛ղ...

Անմիջապէս ձեր շուրջը կը ժողովվի մի բազմութիւն և նոյնպէս կը նայէ երկընքին։

Եւ թող այն ժամանակ դանվի մի անհատ, որ չը խառնվի ամբոխին և զէթ մի ակնթարթ չը հաւատայ, որ դատարկ երկնքում փող է թռչում։ Նա կը խառնվի ամբոխին նոյն իսկ այն ժամանակ, երբ համոզված է, որ երկնքի վրա ոչինչ չը կայ, որ դա մի անգործ կատակասէրի թեթեւ խաղ է։

Ճիշդ այսպիսի մի խաղ է խաղացել Արցիբաշեվը ռուս հասարակութեան գլխին։

Մի վայրկեան նա մտել է ամբոխի մէջ և նայելով դատարկ երկնքին՝ գոռացել.

— Խանդ, խանդ...

Դա աւելի զօրեղ, աւելի հրապուրիչ գոչիւն է, քան փիղը։

Նա կամեցել է ինչ-որ ասել, ինչ-որ ապացուցել այդ դրաւիչ գոչիւնի տակ։ Եւ ոչինչ չէ կարողացել ասել, ոչինչ չէ կարողացել ապացուցանել։

Բայց ամբոխ իր գլխին ժողովել է, աղմուկ առաջացրել է. ահա գլխաւորը։

Ասում են՝ նա կամեցել է պատկերացնել ժամանակակից կնոջ հոգեբանութիւնը և ժամանակակից տղամարդու վերաբերմունքը դէպի նա։ Գուցէ։ Բայց արտադրել է մի երկ՝ լի հոգեբանական այնպիսի արտուրդով, որին մարդկային հոգուն բոլորովին անտեղեակ սկսնակներն են ընդունակ։

Արդարև՝ ինչ է ուզեցել ասել նա։ Որ կինը ստրուկ է իր սեռային պահանջներին։ Բայց չէ՞ որ նոյնն է և նրա տղամարդը։ Ապա ինչ է այդ ուսանողը, այդ լաթի կտորը, որ շարունակ մրթմրթում է, թէ ինքը փրչացել է և դարձեալ շարունակում է փչանալ։

Որ կինը կեղծում է, խաբում, ստախօսում։ Բայց չէ՞ որ նրա տղամարդն իր «ճշմարտախօսութեամբ» աւելի զազրելի է, քան կինը։ Նայեցէք այդ հերոսին, որի բերանով խօսում է ինքը Արցիբաշեվը։ Նա յանդգնում է ճշմարտութեան անունով գոռալ այն ժամանակ, երբ ինքն էլ մէկն է եղել Կլավդիային ապականողներից։ Աւելի. նա առանց որևէ փաստի մեղադրում է իր բարեկամի կնոջը ամուսնու մօտ և այսպիսով ստիպում է նրան խեղդել անփաստ մեղադրվողին։

Ինչով է այդ ըստ Արցիբաշեվի լաւագոյն հերոսը նրա վատագոյն հերոսուհուց՝ Կլավդիայից բարձր, եթէ աւելի ստոր չէ։

Նա, որ պայքարի մէջ է մտնում մի ախտի դէմ, պէտք է հակառակորդ ընտրէ այդ ախտը կրողներից զօրաւորագոյնին։ Նա չը պէտք է զէնք բարձրացնէ անդամալոյծների վրա։ Կամեցե՞լ է Արցիբաշեվը յղացած բուրժուազիայի փչացած կանանց պատկերը տալ, ինչպէս հաւատացնում են մեզ ոմանք. պիտի ընտրէր եթէ ոչ զօրեղ, գոնէ միջին տիպարը։

Կլավդիաներ և Լենաներ կան բոլոր դասակարգերի մէջ, սկսած բարձր արիստոկրատիայից մինչև բանւոր և գիւղական դասակարգերը։

Բայց, ըստ իս, Արցիբաշեվին ուրիշ բան է հարկաւոր եղել։ Նա կամեցել է իր շուրջն ամբոխ ժողովել մի բարձր գոչիւնով.

— Խանդ։

Ի՞նչ հրապուրիչ էտիկետ մի ժամանակից երկի համար։ Եւ ՝ոն է այն կինը, ՝ոն է այն տղամարդը, որ չի գնայ թատրոն աչքով տեսնելու խանդի կենդանի մարմնացումը։

Գնում են բոլորը։ Եւ ամբոխին հետևում են անհատները։ Ներքևը ոչինչ, աշխատում են դատարկութեան մէջ ինչ-որ խորը փնտրտոյութիւն, ինչ որ թաղնված մտքեր գտնել։ Մտքեր, որոնք, երևի, Արցիբաշեվի գլխովն անգամ չեն անցել։

Այսպէս է ամբոխի ոյժը։

Եւ այդ ոյժին ենթարկվում են և Թիֆլիսի ժուրնալիստները, որ մատղեր են այս օրերս դատ բանալ Արցիբաշեվի հակահոգեբանական և անբովանդակ երկի մասին։

Տեսնենք, նրանք ինչ փիղեր պիտի տեսնեն դատարկութեան մէջ։

Շիրվանզադէ

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Միօրեայ ընդհանուր վիճակագրութեան ահագին նշանակութիւնը պետական և գիտական տեսակէտից ընդհանրութեան կողմից ընդունված է որպէս ակսիօմա. բաւական է յիշել, որ պետական կեանքում անցկացված իւրաքանչիւր ըէֆօրմի անհրաժեշտութիւնը հիմնված է երկրի կուլտուրական-մտնեսական պահանջների վրա, որոնց ըէալ պատկերը տալիս է ընդհանուր վիճակագրութիւնը։ Եւրոպական տէրութիւններից մեծ մասում օրէնքը պահանջում է իւրաքանչիւր տասը տարուց յետոյ՝ ամբողջ պետութեան մէջ կատարել միօրեայ ընդհանուր վիճակագրութիւն, իսկ վերջինիս ծախսերը ծածկել 10 տարվայ ընթացքում այդ նպատակին յատկացված և իւրաքանչիւր տարվայ բիւջէի մէջ մտցված գումարով։ Այդ դէպքում վիճակագրութեան ծախսերը իրանց ծանրութիւնը պետական գանձարանի համար կորցնում են, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք նրա պետական և կուլտուրական նշանակութիւնը։

Ռուսաստանում միօրեայ վիճակագրութիւնների անհրաժեշտութիւնը ընդունված է 1895 թ. օրէնքով. նա նոյնպէս կոդիֆիկվեց է պարբերականութեան սկզբունքին, բայց որոշ ժամանակ չէ նշանակում եւրոպականի նման։ Իսկ զեմստվոյին և քաղաքային ստատիստիկան գործում է 35 տարի և ոչ թէ եւրոպականից յետ չէ մնում, այլ նոյն իսկ շատ կողմերում նրանից առաջ է, մանաւանդ գիւղացիութեան անտեսականը պարզելու համար տուած օգուտների մէջ։

Նոր ընդհանուր վիճակագրութեան պահանջը Ռուսաստանում զգալի դարձաւ 1905 թ-ից յետոյ, երբ պատերազմը և նրան հետեւող ներքին պետական անցքերը փոխեցին ազգաբնակութեան կազմը, յեղաշրջելով նրա մտնտեսական կեանքի շատ կողմերը։ Երիտասարդ ժողովրդի ներկայացուցչութիւնը նոյնպէս մի քանի անգամ մատնանշել է վիճակագրութեան անհրաժեշտութեան վրա, որովհետև միայն նրա միջոցով նա կարող կը լինի ծանօթանալ մանրամասնօրէն՝ ժողովրդական կեանքի նոր պահանջների հետ։

Մայրաքաղաքի լրագիրները ասելով, ներքին գործերի մինիստրութիւնը պատրաստել է նոր ընդհանուր վիճակագրութեան նախագիծը։ միևնոյն ժամանակ սկսվել են պատրաստական աշխատանքները դաւառում. մինիստրութիւնը մտածում է վիճակագրութիւնը կատարել 1915 թուի աշնան, նրանից առաջ անցկացնելով ստատիստիկան կոմիտէի արտատական ըէֆօրմը։

Վիճակագրութեան ընդհանուր ղեկավարութիւնը կը լինի բարձրագոյն նշանակված յանձնաժողովի ձեռքում ներքին գործերի մինիստրի նախագահութեամբ։ Նահանգներում և դաւառներում գործելու են յատուկ նշանակված յանձնաժողովներ, որոնք կունենան որոշ ինստրուկցիաներ։ Պատրաստական աշխատանքների գլուխն է կանգնած ռուս ստատիստիկական գիտութեան ներկայացուցիչներից մէկը։ Ռուս հասարակութիւնը և մանաւանդ ինտելիգենցիան վերին աստիճանի բարեացակամ է վերաբերվում այդ մտքին, և եթէ նրան թոյլատրվի անմիջական մասնակցութիւն ունենալ վիճակագրութեան մէջ, այն ժամանակ նրա աշողութիւնը ապահովված է։ Աշողութիւնը անկասկած է և այն պատճառով, որ այժմ ոչ մի խօսք չէ կարող լինել ժողովրդի անպատրաստութեան մասին, որովհետև 1897 թուի վիճակագրութեան փորձը ցոյց տուեց, թէ գիւղացիական մասսան շատ աւելի մեծ դիւրութիւններ է տալիս, քան քաղաքի մանր բուրժուազիան, և բացի դրանից՝ 35 տարվայ ընթացքում գործում են զեմստվային և քաղաքային ստատիստիկական կոմիտէները. գիւղացիութիւնը սովորել է պատասխանել նրանց կեանքին վերաբերող ամենադժուար հարցերին. քաղաքներում նոյնպէս պարբերաբար կատարվում են վիճակագրութիւն. Սիբիրում այդ գործը մեծ աշողութեամբ կատարում են գաղթականութեան ճիւղի օրգանները։ Անձնական պերսօնալի պակասութիւն նոյնպէս չէ կարող լինել, մանաւանդ որ մինիստրութիւնը բացել է յատուկ ստատիստիկական կուրսեր այդ նպատակով։

Կիևի գիւղատնտեսական համագումարը խնդիր է յարուցել մտցնել վիճակագրութեան ծրագրի մէջ նաև մի շարք հարցեր, որոնք պիտի պարզեն մանրամասն կերպով ռուսական գիւղատնտեսական արդիւնաբերութեան պատկերը, աշխատաւոր ձեռքերի քանակութիւնը և շրջանառութեան մէջ եղած կապիտալի մեծութիւնը։

Առաջիկայ վիճակագրութիւնը պարզելով ընդհանուր պետական կեանքին վերաբերող բազմաթիւ հարցեր՝ կունենայ և մեծ նշանակութիւն կովկասեան ժողովուրդների համար։ Մինչև այժմ Կովկասի՝ Ալէքսանդր II-ի մեծ ըէֆօրմներից զրկված լինելը բացատրվում էր երկու պատճառներով, նախ՝ սեպարատիզմի վախով և երկրորդ՝ կովկասեան ժողովուրդների անկուլտուրականութեամբ ու տգիտութեամբ։ Բայց այնպիսի մեծ պետական գործչի, ինչպիսին է Կովկասի փոխարքան, հեղինակաւոր կարծիքը ցրեց սեպարատիզմի լեգենդան. նա ապացուցեց, թէ ինչպէս որ չը կայ առանձին ազգերի սեպարատիզմ, այնպէս և գոյութիւն չունի ընդհանուր կովկասեան սեպարատիզմ, և որ այդ ժողովուրդները, լինելով լոյալ ռուս պետականութեան, ցանկանում են պահպանել միայն իրանց կուլտուրական ինքնուրոյնութիւնը։ Առաջիկայ վիճակագրութիւնը կոչնչացնի նոյնպէս և երկրորդ արգելքը, այն է՝ կուլտուրական անպատրաստութիւնը. նա ցոյց կը տայ, որ Կովկասի, մասնաւորապէս Անդրկովկասի ժողովուրդները թէ տնտեսապէս և թէ կուլտուրապէս պատրաստ են 60-ական թուականների առաջադէմ ըէֆօրմների համար, որպիսիք են զեմստվոն, երդուեալ ատենակալների ինստիտուտը և այլն, և որ Կովկասը շատ աւելի պատրաստ է դրանց համար, քան թէ Սիբիրը և Թուրքեստանը, որտեղ մտադրութիւն կայ աւելի առաջ անցկացնել այդ ըէֆօրմները։ Ընդհանուր վիճակագրութիւնը ցոյց կը տայ, որ Կովկասի տնտեսական-կուլտուրական կեանքը չէ կարող արագ զարգանալ առանց հմայարանի, զեմստվոյի և երդուեալ ատենակալների դատաստանի, որոնց անհրաժեշտութիւնը ընդգծված է նաև փոխարքայի կողմից։ Այդ ըէֆօրմներն անցկացնելուց յետոյ, կը սկսվի նոր պարզրջան կովկասեան ժողովուրդների պատմութեան մէջ։

Ե. Ց.

Մոսկվա

ԲԱՂԱՔԱՑԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՓՈԽԱՐՔԱՑԻ ՄՕՏ

—

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի քաղաքային դումայի կողմից ընտրված պատգամաւորութիւնը ներկայացաւ նոյեմբ. 28-ին, ցերեկվայ ժամը 3½-ին, Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին։

Կոմսը պատգամաւորութեանը ընդունեց Դեղին հիւրասենեակում։

Քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկ, ներկայացնելով պատգամաւորութեան անդամներին, կարդաց այն յայտարարութիւնը, թէ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկով դումայի ամբողջ կազմի բուռն ցանկութեամբ ընտրվել է Թիֆլիս քաղաքի պատուաւոր քաղաքացի։

Ի պատասխանի դրա՝ փոխարքան ասաց մօտաւորապէս հետեւեալը.

«Թիֆլիսը ես սիրել եմ՝ սկսած դեռ իմ պատանեկութեան օրերից, և շատ բաղդաւոր եմ, որ այժմ դուք ինձ ընտրել էք իմ սիրած քաղաքի պատուաւոր քաղաքացի։ Շնորհակալ եմ ինձ ցոյց տրված պատուի համար։] Երեք օր առաջ ես ստորագրեցի պօլիտեխնիկումի վերաբերեալ ձեզ արդէն յայտնի եզրակացութիւնը։ Շատ առաւելութիւններ կային ինչպէս Սարուրթալոյի, այնպէս և Նաթալուղի օգտին, սակայն ի նկատի ունենալով գլխաւորապէս այն հանգամանքը, որ Նաթալուղում պօլիտեխնիկում հաստատելը բոլորովին ապահովված է ֆինանսական տեսակէտից, ես ստորագրեցի մասնաժողովի մեծամասնութեան առաջարկութիւնը։ Այժմ, պարոններ, աշխատեցէք շուտով աւարտել բոլոր ձեր տեխնիքական ու ֆինանսական հաշիւները, որպէսզի եկող գարնանից կարելի լինի դնել պօլիտեխնիկումի հիմքը»։

Ի պատասխանի դրա՝ խշխ. Ա. Մ. Արղութեան ասաց.

«Թիֆլիս քաղաքի ազգաբնակութիւնը անսահման կերպով երախտապարտ է Ձերդ Պայծառափայլութեան, որ վերջնականապէս լուծեցիք պօլիտեխնիկումի տեղի հարցը։ Ներկայումս արդէն անկասկած է, որ պէտք է իրագործվի այն ջերմ ցանկութիւնը, որ մնդում էր իր մէջ աւելի քան 40 տարի այժմ Ձեր մայրենի քաղաքի ազգաբնակութիւնը»։

ՊՕԼԻՏԵԽՆԻԿՈՒՄԻ ՄԱՍԻՆ

—

Նոյեմբերի 27-ին, երեկ. ժամը 8-ին, ինչպէս հաղորդում է «Кавказъ» թերթը, տեղի ունեցաւ հօգմէյստէր Ն. Լ. Պետերսոնի նախագահութեամբ Թիֆլիսի պօլիտեխնիկական ինստիտուտ հիմնելու գլխաւոր կոմիտէի նիստը։

Նիստի սկզբին կարդացվեց փոխարքայի արդէն յայտնի վճիռը պօլիտեխնիկումի տեղի վերաբերմամբ։

Յետոյ զեկուցվեց փոխարքայի 100,000 ռուբլու նուիրաբերութեան մասին ապագայ պօլիտեխնիկումի օգտին։ Նուէրի միակ պայման առաջարկվում է այն, որպէսզի պօլիտեխնիկումի շինութիւնների կառուցման առաջին ծախքերը կատարվեն այդ գումարից։ Կոմիտէը միաբերան խնդրեց նախագահին խորին շնորհակալութիւն յայտնել այդ առատ նուիրաբերութեան համար կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին։

Ապա կարդացվեց այն նախագծերի ցուցակը, որ ներկայացրել է կովկ. ուսումն. շրջանի հոգ. Ռուդոլֆը ապագայ պօլիտեխնիկումի կազմակերպութեան մասին. 1) պօլիտեխնիկումի կանոնադրութիւնը, 2) ժամանակաւոր ծառայողներ, 3) ուսումնական պլանը և բացատրիչ գրութիւնը, 4) շինութիւնների կառուցման նիւթերը, 5) ինստիտուտը սկզբնապէս կահաւորելու նիւթերը։

Գլխաւոր կոմիտէի անդամ իշխ. Գ. Թումանեան ընդհանուրի հաւանութեամբ առաջարկում է ապագայ պօլիտեխնիկումը անուանել Ռոմանովեան, ի նկատի ունենալով որ նրա վիճակում վճռական դերը տեղի ունեցաւ Ռոմանովների Տան Թագաւորութեան 300-ամեայ յօբելեանի տօնակատարման ժամանակ։

Վերոյիշեալ նախագծերը կոմիտէը վճռեց յանձնել համապատասխան մասնաժողովների նախնական քննութեանը։ Տեխնիկական մասնաժողովը որոշվեց դարձնել գործադիր և նրա վրա դնել ոչ միայն նախագծերի քննութիւնը, այլ և նրանց գործադրութեան եղանակների որոշումը և այլ կարգադիր գործողութիւնները։ Դրա համար մասնաժողովի տրամադրութեան տակ դրեց 15,000 ռուբլի։ Տեխնիկական մասնաժողովի նախագահ ընտրվեց ինժեներ Լեոն Իվ. Ղուլիանը (Բաքուի նաֆթարդիւնաբերողների համագումարի ներկայացուցիչ). իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկ առաջարկեց՝ տեխնիկական մասնաժողովին օգնելու համար քաղաքային վարչութեան ոյժերը։

Յետոյ տեղի ունեցան լրացուցիչ ընտրութիւններ տեխնիկական, ուսումնարանական, ֆինանսական և վերաստուգիչ մասնաժողովների համար։ Տեխնիկ. մաս. մէջ ընտրվեցին իշխ. Ա. Մ. Արղութեան, Ա. Բաբեան, Ս. Գոֆման, Ն. Ռուդոլֆ, Ի. Սմիրնով, Ա. Խատիսեան և Տ. Էնֆիաճեան. ուսումն. մաս. մէջ՝ Մ. Աթաբէգեան, Ս. Գոֆման, Դ. Բէզօբրազով, Ֆ. Բլագովիշով, Ն. Պետրով, գեն.-լեյտ. Պորշին, Ի. Ֆէխնէր, Կ. Շաշկովսկի. ֆինանսական մասն. մէջ՝ քաղաքային վարչութեան այն անդամները, որոնք կառավարում են ֆինանսական ու հողային բաժանմունքները, Ն. Զուլկովսկի, Սմիրնով, Ս. Բալաղեան, Ա. Միլեան. վերաստուգիչ մասն. մէջ՝ իշխ. Աբխազի, Սմիրնով, Ա. Միլեան և Պ. Գուռաւ։

Միևնոյն երեկոյ կայացաւ տեխնիկական մասնաժողովի 1-ին նիստը։ Առաջ քան Ռուդոլֆի ներկայացրած նախագիծը մանրամասն քննելուն ձեռնարկելը, մասնաժողովը որոշեց խնդրել հոգաբարձութիւն պատճէններ վերցնել նախագծերի էսկիզներից։

Մասնաժողովի երկրորդ նիստը նշանակված է դեկտ. 7-ին։ Նրա նախնական աշխատանքները պէտք է աւարտվեն 3 ամսվայ ընթացքում այն հաշիւով, որպէսզի շինարարական սեզոնի սկզբին հնար լինի դնել շինութիւնների հիմքը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «С.-Пет. Вѣд.» թերթի նոյեմբերի 20-ի համարում տպված է Բաֆֆիի «Թիւրքահայերը» աշխատութեան այն մասը, որ կրում է «Քիւրդ և Թիւրք» վերնագիրը։ Թարգմանութիւնը կատարել է Մ. Ալլահ-վերդեանը։ Ինչպէս հիշդ նկատում է թարգմանիչը իր տուած ծանօթութեան մէջ, թէև այդ յօդուածը գրված է վաղուց և քիւրդերի կեանքի մէջ մի քանի բան փոխվել է, բայց, ընդհանրապէս առած, նա տալիս է քիւրդի ընտանեկան կենցաղի և հասարակական կեանքի լիակատար և գեղեցիկ նը-կարագրութիւնը, որից պարզվում է, թէ որքան ծանր և անտանելի պէտք է լինի թիւրքահայերի կեանքը, որոնք շրջապատված են այդպիսի վայրենի և կիսաթափառական ցեղով։

◆ Ստացանք պրոֆ. Ֆրեդերիկ Մաքլէրի ֆրանսերէն «Հայկական փոքրիկ գրադարանի» մի նոր հատորը։ Այս անգամ յայտնվելի պրոֆէսորը տուել է Ց. Պարոնեանի «Բաղդասար աղբար» կատակերգութեան թարգմանութիւնը։ Ինչպէս յայտնում է ծանօթութեան մէջ, «Հայկական փոքրիկ գրադարանի» հետևեալ հատորը լինելու է Շահրիարի «Տասներկու պատմուածների» թարգմանութիւնը, որ կատարել է Էդնայեանը։

◆ Նոյեմբերի 28-ին տեղի ունեցաւ դումայական դպրոցական մասնաժողովի նախագահ Ալիխանեանի նախագահութեամբ քաղաքային դպրոցների վարժուհիների ժողովը, ուր որոշվեց ուղարկել ներկայացուցիչներ այս դեկտ. 23-ին Պետերբուրգում կայանալիք մասնավարժական համագումարին մասնակցելու համար։ Ընտրվեցին ներկայացուցիչներ տ. տ. Խոջայեան, Կունդուրովա և Եգորովա։

◆ Այսօր նշանակված է քաղաքային դումայական բիւջէտային-ֆինանսական մասնաժողովի նիստը քննելու այն հարցը, թէ ինչ միջոցներով կարելի է չանել աղքատ ազգաբնակութիւնից քաղաքային տուրքերը ի յիշատակ Ռօմանովների Տան Թագաւորութեան 300-ամեայ յոբելեանի։

◆ Կովկասի փոխարքային ներկայացան Կարս-Սարիղամիշ երկաթուղագիծը կառուցանող ինժեներ Բացիբօրակին և Երևանեան գնդի հրամանատար գնդապետ Մ[illegible]։

◆ Թիֆլիսի դատաստանական պալատի քրէական նստաշրջանը մեկնեց Երևան և Կարս։

◆ Այսօր, ց. ժ. 11-ին, կայանալու է վրաց սեմինարիայի տարեկան հանդէսը։

◆ Այսօր Բագուում բացվելու է Բագուի նաւթարդիւնաբերողների հերթական համագումարը։

◆ Թիֆլիսի բօրսային կոմիտէը նոյեմբ. 27-ի իր նիստում լսեց Ա. Մելիքանի նախագահութեամբ Գ. Խատիսեանի երկու զեկուցումները՝ 1) «Ի՞նչպէս փրկել Թիֆլիսը ձկան սովից» և 2) «Անդրկովկասում հասարակական ստուգատներ հիմնելու մասին»։ Որոշված է յիշեալ երկու զեկուցագրերը կարդալ համառուսական ստուգային գործիչների համագումարին Թիֆլիսում, այս դեկտեմբերի 15—20-ին։

◆ Դեկտ. 1-ից ստանձնում է իր պաշտօնը Բուքայիսի նահանգապետ գեներալ Զասիպկինը։ Թիֆլիսի ոստիկանապետ է կարգված Բալախանի-Սաբունչիի ոստիկանապետ գնդապետ Նազանսկին։ Քուքայիսի նախկին նահանգապետ Սլալօչինսկին փոխարքայի կարգադրութեամբ ստանում է արձակուրդ։

◆ Թիֆլիսի իրաւաբանների ընկ. նախագահ է ընտրվել Տօլպիգօ, քարտուղարներ՝ Կուսիկեան և Խուբէրեան, գանձապահ՝ Ծովեանեան։

◆ Կայս. Կովկ. Բժշկ. Ընկ. շինութեան մէջ լինելու են հետևեալ ձրի դասախօսութիւնները։ Այսօր, երեխաների համար, ժ. 4—5 ա. Լիմանովսկի խօսելու է փոքրիկ Թումայի մասին (ռուսերէն)։ Վաղը, կիրակի, ժ. 10—11 Ս. Գալաչեանը խօսելու է գայլերի մասին (հայերէն), Նարիէնս, իշխան Իլիկոյի մասին ժ. 11—12 (վրացերէն)։ Հասակաւորների համար՝ բժ. Զաւարեանը ռուսերէն կը դասախօսէ քութէշ հիւանդութեան մասին ժ. 5—6։ Իսկ ժ. 6—7 բժշ. Ֆլորինան կը խօսէ մարդու կազմուածքի մասին։

◆ Թիֆլիսի երաժշտասէր հասարակութեանը ծանօթ երգիչ Կամենսկին եկել է Թիֆլիս գաստրոլների համար։ Առաջին գաստրոլի առիթով վաղը երեկոյ, Արքունական թատրոնում, նշանակված է «Սէվիլեան սափրիչ» կոմ. օպէրան։

◆ Այսօր Հասարակական Ակումբում, երեկոյեան ժ. 5—8-ի միջև, կը լինի երեխաների երեկոյթ Մարգարեանի զեկավարութեամբ։ Միևնոյն երեկոյ կը ներկայացվի «Старческая любовь» դրաման։

◆ Այսօր Արաբական Ընկ. համերգային դահլիճում կայանալու է Ալ. Բօրբօվսկիի համերգը։

◆ Նոյեմբերի 28-ին թիւրքահպատակ Գէորգ Վարդանեանը 7 տարեկան (ս. Գէորգի ծխական դպրոցի աշակերտ) պատշգամբում խաղալիս երկրորդ յարկում թեքվեց պատշգամբի վրայից և, կորցնելով հաւասարակշռութիւնը, ընկաւ տան բակը և ստացաւ մարմնի վրա ծանր ջարդուածքներ։ Շուտափոյթ օգնութեան կառքով երեխային տարան Միքայէլեան հիւանդանոցը։ Նրա կեանքը վտանգի մէջ է։

◆ Նոյեմբ. 27-ին Եկատերինա Մոշչէնկան՝ 30 տարեկան՝ իրան կեանքից զրկելու նպատակով խմեց թոյն։ Հիւանդանոցում նա մեռաւ ուշքի չը գալով։

◆ Նոյեմբերի 28-ին, երեկ. ժ. 9½-ին 23 տարեկան Գլիկէրիա Մուհամէդովան «Օլիմպ» հիւրանոցում անձնասպանութիւն գործելու նպատակով խմեց մեծաքանակ քացախ։ Թունաւորվածին տարան Միքայէլեան հիւանդանոց, ուր թողնված է բժշկութեան համար։ Նրա կեանքը վտանգի մէջ է։ Մուհամէդովան թողել է հետևեալ գրութիւնը. «Սիրելի ժէնիա, մնաս բարով, այլևս չեմ կարող ապրել, ես յոգի եմ, իսկ դու...»։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

— ◆ Վրաց ակումբի աւագների խորհուրդը որոշել է Մոսկվայից Թիֆլիս հրաւիրել երաժշտագէտ Դ. Արազիշվիլին (Արակչեվ), Վրաց թատրոնում մի շարք սիմֆոնիական համերգներ կազմակերպելու նպատակով։ Սիմֆոնիական համերգներից միևնոյն ի միջի այլոց կը նուագվի նոյն երաժշտագէտի սիմֆոնիական արտադրութիւնը՝ «Թուշի աղջկայ պարը»։

◆ Վրաց իւմօրիստ (երգիծաբան) Դ. Կղիաշվիլին գրել է մի գործ. կոմեդիա, որ կրում է «Ուբէդուրի» (անբաղդ) խորագիրը։ Պիէսը, որի սիւժէն վերցված է գիւղական կեանքից, այս սեզոնի ընթացքում կը խաղացվի վրաց թատրոնում։

◆ Դեկտեմբերի 1-ից Թիֆլիսում կը սկսէ լոյս տեսնել գրական մի շաբաթաթերթ «Սուսխի» անունով։

◆ Հիւանդութիւնից ազատված Պետական Դումայի անդամ Ակակի Զիչինկէլին այս օրերս մեկնում է Պետերբուրգ, Պետական Դումայի նիստերին մասնակցելու համար։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

— *Վրաց թատրոն*

«Հերոս և Պսիխէ», պիէս 5 գործ., հեղ. Փուլվսկիի, թարգմ. տ. Բաբիլինայի, բենեֆիս Ն. Չխեիձէի

Պիէսը ուշագրաւ և հետաքրքրական, թէև մի քիչ տենդենցիոզ, բենեֆիսի հերոսուհի Նինո Չխեիձէի խաղն գեղեցիկ, մտածված ու զգայուն, թատրօնը ծայրէ ի ծայր լի ընտիր հասարակութեամբ և առաջաւոր մըտաւորականութեամբ, թարգմանութիւնը աջող և ախորժալուր։

Էլ ինչու գոհունակ սրտով և լի բաւականութեամբ չը պիտի յաճախէ վրաց հասարակութիւնը իր մայրենի թատրոնը։

Ի՞նչ պատճառ ունի վրացի թատերասէրը ժողովուրդը դժգոհ մնալու վրաց թատրոնի վարիչներից, քանի որ վերջիններս ամեն հիզ ու ջանք են թափում զարգացնել, ուռճացնել մայրենի բեմը, նորանոր ինքնուրոյն և թարգմանական գեղեցիկ պիէսներով ճոխացնել վրաց թատրոնի բեպերտուարը։

Մնում է միայն, որ վրացի բանիմաց հասարակութիւնը խուսներում բաղմութեամբ յաճախէ իր թատրոնը և խրախուսէ նրա վարիչներին ու նպաստէ Մելպոմենայի տաճարի զարգացմանը։

Մնամէջ և դատարկհնչիւն խօսք չէը, երբ մենք մի ժամանակ տեսնելով տ. Ն. Չխեիձէին «Կամելիազարդ տիկին» պիէսի մէջ, համեմատեցինք նրա խաղը Եւրօպայում մեծ հռչակ ստացած խորտատաղանդ դերասանուհի M-le Հադինգի խաղի հետ։

Եւ իրաւ, որ նոյեմբերի 28-ի գիշերը տ. Չխեիձէի խաղը գոհացրեց մեզ իր յոյժ էստետիկութեամբ և յոյզերի ու ապրումների խորունկութեամբ։

Հասարակութիւնն էլ, որ իր սիրելի դերասանուհուն յարգանք ցոյց տալու համար մեծ բազմութեամբ լցրել էր թատրոնի սրահը, թարմ ծաղիկների տարափով, բազմաթիւ ծաղկեփունջերով և ծաղկէ կողովներով իր սիրաղեղուն համակրանքն յայտնեց հոգով գեղեցիկ և մտքով վեհ դերասանուհուն։

Վրաց բեղուն բանաստեղծ Իրոդիոն Էվդոշվիլիի քոյր, նոյնպէս բանաստեղծ տ. Բաբիլինան էր կատարել վերոյիշեալ պիէսի թարգմանութիւնը, որը լիապէս աջողված կարելի է համարել, մանաւանդ բանաստեղծական մասի կողմից։

Միւս դերակատարներն էլ, մի սրբա, մի հոգի դրված ոչ մի ջանք չը խնայեցին իրանց սիրելի ընկերակցուհու բենեֆիսը փայլուն կերպով անցնելու համար։

Պիէսն առաջին անգամն էր, որ դրվում էր վրաց բեմի վրա և բեմայարդարութեան տեսակէտից ևս աջող կերպով էր դրված, որ պատիւ կարող է բերել բեժիսեոր Մ. Քօրելիին։ Ց. Գ.

ՄԱՄՈՒԼ

«Астраханскій Листокъ» լրագիրը, նոյեմբերի 21-ի իր համարում զետեղելով պ. Աբել Ապրէսեանի պատկերը, նրա 35-ամեայ գործունէութեան առիթով, հետևեալն է գրում.

Այս տարի լրանում է Աստրախանի հայերին լաւ ծանօթ Ա. Ապրէսեանի՝ «Մեր կեանք» այժմ դադարած շաբաթաթերթի խմբագրի հասարակական և լրագրական գործունէութեան 35-ամեակը։

Ապրէսեանը իր սկզբնական կրթութիւնը ստացել է Թաւրիզ քաղաքում յայտնի վիպագիր Բաֆֆիի զեկավարութեան ներքոյ։ Այդ դպրոցում ուսումն աւարտելուց յետոյ, նա տեղափոխվեց Ռուսաստան, հաստատվեց Շուշում, ծառայելով մի առևտրական հիմնարկութեան մէջ և այդտեղից 1878 թ. ուղարկեց «Մշակին» իր առաջին թղթակցութիւնը, որից յետոյ սկսեց կանոնաւորապէս թղթակցել այդ լրագրին 20 տարվայ ընթացքում, իսկ 1898 թուից սկսեց աշխատակցել նաև Կ. Պոլսի «Արևելք» և «Հայրենիք» թերթերին։

Բացի ժուրնալիստիկայից, Ապրէսեանի գործունէութիւնը արտայայտվեց և հրատարակչական ասպարէզներում. նա հրատարակեց Բաֆֆիի «Խենթը», Շիրվանզադէի «Գործակատարի յիշատակարանը», Վ. Փափազեանի գրուածքների մի հատորը և այլն։

Բաղդի բերմամբ ստիպված լինելով անցնել Անդրկովկասի մի մասից միւսը, Ապրեսեանը, բացի անձնական գործերից, հետաքրքրվում էր հասարակական գործերով։ Կարսում, 1897 թ., նա եղբէր վ. Մուրադեանի հետ հռանգուն մասնակցութիւն ունեցաւ հայոց դպրոցի շինութեան համար նուէրներ հանգանակելու գործի մէջ։ Բագու և Բաթում քաղաքներում շատ աշխատեց գրադարաններ բանալու և ներկայացումներ կազմակերպելու համար։ Աստրախանում, ինչպէս ասվեց, հրատարակում էր և խմբագրում էր «Մեր Կեանք» թերթը. վերջին ժամանակներս գրեթէ միշտ անդամ էր հայոց գրական ընկերութեան վարչութեան և այժմ ևս մտադիր է զբաղվել հայ բնակիչների ռուսական թարգմանութեան հրատարակութեամբ։

*

«Մշակի» 265-րդ համարում զետեղված առաջնորդող յօդուածը, որ վերաբերում էր կովկասեան պոլիտեխնիկումին, թարգմանաբար առած է բերված վրաց «Սախալխօ Գազէթի» թերթի № 1055-ում։ Ցիշեալ առաջնորդողի առիթով թերթը հետևեալ տողերն է գրում.

Հետաքրքրական է գիտենալ, թէ ում հետ է բանավիճում «Մշակ» լրագիրը։ Որչափ մենք գիտենք, վրաց թերթերում ոչինչ չէ եղել ասված նրա վերաբերմամբ, թէ պոլիտեխնիկումի տեղի ընտրութիւնը ազգային նշանակութիւն ունի։ Ի՞նչն է խօսեցնում «Մշակին»։ Երևի ինքն իսկ զգում է, որ շան գլուխը բոլորովին այլ տեղ է թաղված։ Եթէ այս այսպէս չը լինէ, «Մշակին» այն չէր պատկերանայ, որի մասին է գրում։ Եթէ չեն ծեծում, ինչու ես գոռում»։

«Մշակը» իր յօդուածը գրելիս՝ ի նկատի է ունեցել «Յառ. Բեկ» թերթի յօդուածը, որ ներկայ դէպքում նա համարել է վրաց մի քանի շրջանների կարծիք։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼԱԶԻՍՏԱՆԻ ԱՓԵՐԷՆ

— *Տրապիզոն, 25 նոյեմբեր*

Տուրքերը և մանաւանդ հնուց մնացածները մեծ ջանքով և շտապով կը հաւաքուին։

Գործադրուած խստութիւնները չափը կանցնեն։ Թահսիլդարները արտօնութիւն ստացած են կառավարութենէն ամեն միջոցի դիմել և դրամ գանձել։ Ծեծը, բանտարկութիւնը սովորական բաներ են։ Շատ առներ ընտանիքի ապրուստ հացահատիկը դուրս հանուած է թահսիլդարի և ոստիկանների ձեռքով ու ծախուած կէս գնով։ Բազմաթիւ տուներու տանիքի կղմինտրները քանդուած և ծախուած են։

Խստութիւնները հաւասարապէս կը գործադրուին թէ հայու, յոյնի և թէ լազերու վրայ։ Ա. Պօնտացի

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— ◆ Ֆրանսիական «Temps» լրագիրը ապել է Գերմանիայի դէմ մի յօդուած, որի մէջ ի միջի այլոց ասում է, թէ Գերմանիան իր ձեռքն է առել Թիւրքիային, և դրանով ոչ միայն Ռուսաստանը, այլ և ամբողջ Եւրօպան կարող է տեսնել իրանց շահերի խախտումն։

◆ Մոսկվայում ինքնասպանութիւն գործեց դեռատի բանաստեղծուհի ուսանողուհի Լվովան։

◆ Պետերբուրգի պաշտօնական շրջանակներում խօսում են, որ ներքին գործերի մինիստր Մակլակովը փոխարինելու է մինիստրների խորհրդի նախագահ Կոկովցեվին։

◆ Արդարադատութեան մինիստրութիւնը հեռագրով տեղեկացրել է Կիէվի նահանգական դատարանին, որ Բէյլիսի գործի վճռաբեկ բողոքի հարցը վճռվել է բացասաբար։

◆ Գերմանական սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան ըէյխստագին օրինագիծ է ներկայացրել սահմանադրութիւնը փոխելու մասին այն իմաստով, որպէսզի պետական կանցլերը պատասխանատու լինի ըէյխստագի առաջ, նաև որոշվի թէ պատերազմ կարող է յայտարարվել միմիայն ըէյխստագի համաձայնութեամբ։

◆ Պետերբուրգում լոյս է տեսնելու նացիոնալիստների օրգան «Голосъ Руси» անունով։ Ժողովված է 100 հազար բուբլի։

◆ Բ. Դուբը մտադիր է յետ կանչել Պետերբուրգից իր դեսպան Թուրխան-փաշային, փոխարինելով նրան հասարակական աշխատանքի ներկայ մինիստր Նիկամիով։ Դիւանագէտները այդ համարում են խոշորագոյն սխալ։

◆ Պետերբուրգում «Ֆրանսիա» հիւրանոցում 80 գրող, պրոֆէսօր, պատգամաւոր և գրականագէտ պատուեցին խնճոյքով բելգիացի յայտնի բանաստեղծ Վէրհարնին։

◆ Պետերբուրգի թատրոնների ըստ էքսպուատարիայի հանվեց Լ. Անդրէեվի նոր պիէսը՝ «Մի սպանիր», որովհետև աղլակողմանները նրա մէջ նկատեցին քաղաքական սիմվոլիկա։

◆ Կանտոնում երևան հանվեց դաւադրութիւն, ուղղված կառավարութեան դէմ։ Կալանաւորվածներին ըստ պատնում է մահապատիժ։

◆ Բերլինում գրող Հաուպտմանի աւտոմոբիլը խորտակվեց։ Հաուպտմանը վիրաւորված է։

◆ Պետերբուրգի պոլիտեխնիքական ինստիտուտում գործադուլը վերջացաւ։

◆ Լուրերի համաձայն, Մակլակովը դուրս է գալու սահմ.-ռամկավարների կուսակցութիւնից դումայական նախագծի առիթով տարաձայն լինելու պատճառով։

◆ Պետերբուրգում անձնասպան եղաւ զինուորական բժիշկ Զուրիլովը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

28 նոյեմբերի

ԲԵՐԼԻՆ։ Դասագրքերի արին Լայպցիգի առևտրաբուժական դպրոցի ուսանողները, պահանջելով տալ առևտրագրոյժներին զօկտորի կոչում։ Վիւրկբուրգի և Բերլինի առևտրագրոյժ-ուսանողները նոյնպէս մերժել են դասագրքերը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաւվեց «Բեկ»-ի № 326-ը՝ «Մակլակովը Բէյլիսի գործում» յօդուածի համար։

Դումայի մի խումբ անդամներ առաջարկում են բանալ Տօմսկի համալսարանում պատմա-լեզուաբանական և ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտէտներ։

Ներքին գործերի մինիստրը թոյլատրեց գումարել Մոսկվայում 1914 թ. յունվարի 2-ին ֆելդշէրական ու մանկաբարձական կրթութեան համագումար։

ԵԱԼՏԱ։ Բօլգարական էկզարխին շնորհվեց Ալէքսանդր Նէվսկիի շքանշան։

ՊԱՐԻԶ։ Բօրկու կոչված տեղում, Ատլանտկան առնված է նոյեմբերի 14-ին։ Սպանվել են մի կապիտան, մի պօրուչիկ, մի ֆելդֆեբել և 12 զինուոր, վիրաւորվել են մի պօրուչիկ և 20 զինուոր։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՔԵՐԻ ՆԵՐԿ

ԸՆԿՈՒՉԵԱԾ ԷԿՍՏՐԱԿՏԻՑ

այն առաւելութիւնն ունի, որ նա միանգամայն անվնասակար է։ Ներկում է սպիտակ, շէկ և սեւեռ գոյնի մազերը արագ և հիմնաւոր կերպով։ Իւրաքանչիւրը կարող է № 4711 ներկով իր մազերին տալ նրանց նախկին, բնական գոյնը։

Գործածելու եղանակը կցված է իւրաքանչիւր սրուակին։ Ծախվում է թէ սև, թէ շագանակագոյն, թէ մութ. և թէ բաց-խարտեաշ գոյների։

1 սրուակը 1 ր. 20 կ. և 2 ր.։

(Ն.12,30,դ.11,31) (Մ. 358716) 5—3



Բացված է Պետերբուրգում ռուսերէն լրագրով լոյս տեսնող միակ ՁՐԻ ԵՒ ԱՄԵՆԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ բժշկական ամսագիր

„Журналъ-Лечебникъ“-ի

1914 թ. բաժանորդագրութիւնը. Ամսագրի նպատակն է՝ հիւանդների նախազգուշացումն և առողջութեան պահպանումն։

Ամսագրի մէջ, յայտնի բժիշկների աջակցութեամբ, պարզ և հասկանալի լեզուով բացատրվում է այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է առողջութեան և կեանքի երկարացման համար։

Բաժանորդագրումն ամբողջ տարվայ համար 3 ՊՐԵՄԻԱՑՈՎ 2 ր., 1-ին պրեմիան պատի գեղեցիկ «Օրացոյց բժշկարան» *1914 թ.*, իսկ 2-րդ և 3-րդ պրեմիան բաժանորդների ցանկութիւնն և ընտրութեան համաձայն կուղարկվին 2 հատ հետևեալ գրքերից. 1) Домашній лечебникъ (առանձին արժէ 1 ր.) 2) Грѣхи молодости (лечебникъ секр. болѣзней 1 р.), 3) Заразныя болѣзни домашнихъ животныхъ (1 р. 25 к.), 4) Искусственное безплодіе (1 р. 25 к.), 5) Самоучитель гипнотизма 2 р.), 6) Полный дѣловой письмовникъ (1 р.), 7) Поваренная книга для хозяекъ (1 р.). Պրեմիաները պատրաստ են և կուղարկվին բաժանորդագիրը ստանալուց անմիջապէս։

Բաժանորդագրվել կարելի է և վճարելով՝ (налож. плат.) 20 կ. աւելի արժէքով, այսինքն բաժանորդները վճարում են պրեմիաները ստանալուց 2 ր. 20 կ.։

Հասցէն՝ С.-Петербургъ. м. 2 п. о. главная к-ра ред. „Журналъ-Лечебникъ“.

(չ.2) *1033.* 8—5

ՀԱՐԿԱՒՈՐ Է

Կանացի հագուստեղէնի

Զեւագիտութիւն իմացող

մի կին կամ օրիորդ ԹԱՒՐԻԶ գնալու համար։

Պայմանների մասին դիմել՝ Елисаветинск. № 17, տիկ. Նազլու Նազարբէկեանին։

1107. 3—1

ԲԱՑՎԱԾ Է 1914 թ. „ԱՂԲԻՒՐԻ“ 32-րդ և „ՏԱՐԱԶԻ“ 25-րդ տարեշրջանների բաժանորդագրութիւնը։ „ՏԱՐԱԶԻ“ XXV-ամեակի առիթով դպրոցական աշակերտների համար „ԱՂԲԻՒՐԻ“ տարեկան բաժանորդագրութիւնը ճանապարհածախսով 1 ր.։ „ԱՂԲԻՒՐ“ եւ „ՏԱՐԱԶ“ յաւելուածներով պրէմիա-ներով 10 ր., արտասահման 18 ր. կամ 50 ֆր.։

Մենք այլևս ոչ մի խօսք չենք ասում, թէ ինչպէս են հրատարակվում «ԱՂԲԻՒՐԸ» և հայկական միակ իլլիւստրասիոն «ՏԱՐԱԶԸ». այդ խօսքը պատկանում է մեր հակառակորդներին։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „АГБЮРЪ-ТАРАЗЪ“. Tiflis. Direction, Agbür-Taraz.

Խմբ.-հրատարակիչ՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

(չ.2.) 31 5—2

ՀՕՆՕՐԵԻ (ՏՐԻՊՈԼԻ) ԴԵՄ ՆՈՐ-ՄԷՏՋՈՑ „SALO—ՊԻՉԻԼԻՆ“

ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործածելու ձեռնարկը կցվում է պրէպարատին։ Իսկական մատուցեալ արդիւնքներում, հատ՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։

Միանգամայն լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայատուկ բնոյթներ։

ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека В. Конгейма.

Ուղարկվում է վճարովի վճարով։ Ճանապարհածախքը պաստային սակագնով։

Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Պաշարների վաճառանոցում։

(չ.) (П. 22276) 0—47

ՀՐԱՒԷՐ

Ս. Մխիթար եկեղեցու Հոփհաս ծխականները կիրակի, դեկտեմբերի 1-ին, առաւօտեան ժամը 11-ին հրաւիրվում են ծխական առաջին ժողովին։

Օրակարգն է—քահանայի ընտրութեան հարցը։

Հոգաբարձութիւն

1106. 2—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный